



The image shows the front cover of a book. The main part of the cover is decorated with a marbled paper pattern. This pattern consists of numerous overlapping, irregular circular or oval shapes in various shades of green, ranging from a deep forest green to a lighter, almost yellowish-green. These green shapes are set against a dark, almost black background. Interspersed throughout the green pattern are thin, irregular, and somewhat branching lines of a golden-brown or ochre color. The overall effect is a dense, organic, and somewhat chaotic texture. On the left side of the image, there is a vertical strip of dark brown, textured material, likely leather or a different type of wood, which forms the spine of the book. In the bottom-left corner, there is a small, white, octagonal label with a thin black border. Inside this label, the year '1970' is handwritten in a blue ink. The label is slightly tilted and appears to be attached to the cover with a small piece of tape or glue.

1970

28.11.19. 1.

~~N 646 1183~~

1372c



ՎԵՐԳ ՏԱՐՈՆՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՂԵԿՍԱՆԴՐԻ ԵՒ ՍՍՐԳՍԻ
ԴԱԶՍՑՆ ԱՇՏԻՇԱՏԱՅ

ԳՐԵԱՅ

ԿԱՐԱՊԵՏ Վ. ՆՍԱՅԵԱՆ ԱՎՐԱՆՑԻ

Մխարան ուխտին ճարտուր



ՏՊԱԴՐ. Մ. Կ. ՍՍՐԸՆԱՆ

—
= 1879 =

ՎԵՐՔ ՏԱՐՈՆՈՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՂԵԿՍԱՆԴՐԻ ԵՒ ՍԱՐԳՍԻ

ԲԱԶՄԱՆ ԱՆՏԻՇԱՍԱՑ

ԳՐԵԱՑ

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԻՊՏ. ԵՍԱՅԵԱՆ ԱՎՐԱՆՏԻ

Միաբան ուխտին ճարտուր

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Կ. ՍԱՐԴԵԱՆ

)(1879)(



1970

ՆԱԽԱԲԱՆ

Մեր Հայրենեաց աւերակներու ներքեւ գիւ-
նաց անթիւ բեկորներ կան թաղուած , որ
ցորդ պատմութեան միջոյս 'իւրցս չեն ըն-
ծայուած :

Տարոն և Աշտիշատ դաւառներ Հայոց պա-
տերազմի կեդրոն են եղած , և դեռ մեր նախ-
նեաց քաջութեան կոթողներ կենդանի վկայ
են մեր աչաց առջև թէ՛ յիշեալ երկիրներու
հողը արիւնով չաղուած է , և թէ՛ արտաքին
բռնութիւններ չարունակ մրրկեալ ծովուց ալ-
եաց պէս միմեանց բաղխելով , ոչ ոք ժամա-
նակ չէ ունեցեր որ գրով 'իւրցս ընծայէր . և
այսպէս բաղում՝ քաջութիւնը իսպառ անհե-
տացան , և ումանք իրրեւ աւանդ մնալով ժո-
ղովրդոց մէջ՝ յորդեոյ որդիս բերանացի կպատ-
մուին : Արդ՝ մեք մեր տկար գրչով պատմա-
կան աւանդական մաս մը մէջ բերելով այս
անգամ՝ յիշատակ կթողունք մեր սիրելի եղ-
բարց : Նախ կ'յիշեմք մեր հայրենի երկրի բը-
նական գեղեցկութիւնը , որ բոլոր աշխարհի
մայրն ու թագուհին է : Երկրորդ՝ մեր նախ-
նեաց ազատ կացութիւնը մինչև հազարացոյց

և մարաց արշաւանքներ, որ մեր հայրենի գրոսխառովայր լերանց վրայ վրանադնակ լինե-
լով մինչև հայկազն Աղեկաւանդը և Սարգիս :
որ 450 տարի առաջ Աշտիշատ գաւառի մէջ
քաջութեամբ պատերազմելով իրենց հայրեն-
եայ աշատութեան համար՝ պատերազմի դաշ-
տի մէջ քաջութեամբ պատկուեցան : երրորդ՝
հազարացիք և մարք դարձեալ պատեհ զըս-
նելով, միահամուռ յարձակեցան Տարոն և
Աշտիշատ գաւառներու վրայ, և սրախողող
առնելով մեր հայրենակիցներն՝ բոլոր երկիրներ
կողոպտեցին : Չորրորդ՝ սովու և սրածովեան
գառն որոյ ճարակ լինելով՝ մեր հայրենի աշ-
խարհ խաղառ քակուեցաւ, և մերայնոց
մեծ մասը ցիրուցան ըլլալով դային գաղթե-
ցին օտար երկիրներ : 'Ի վերջոյ՝ ցարդ հաշ-
տութեան ծիրանի գօտին իւր հաշտութեան
կամարն չէ կտրած Տարոնոյ և Աշտիշատ գա-
ւառներու վրայ, որ իւր ցրուեալ սրղիքն ծո-
ղովէ : Ուստի Տարոնոյ որդիք պարտին առ-
տընին խոռովութենէ իրաց կալ, և սիրով ու
միութեամբ կապուիլ մէկմէկու հետ : որովհե-
տե՞ Մարք իրենց հայրենի երկրի մէջ զիրենք
կիկողեքեն ու կհալածեն : Այո՛, միութիւն
պէտք է, որ փրկութիւն դոնեն մերայինք :

ՎԵՐԻՔ ՏԱՐՈՆՈՑ

ՊԱՏՄ ՈՒԹԻԻՆ

ԱՂԵԽՍԱՆԴՐԻ ԵՒ ՍԱՐԳՍԻ

ՔԱԶԱՅՆ ԱՇՏԻՇԱՏԱՑ

Ամեն երկրէ դարէ ի դար քաջեր
ծնանելով՝ մասնաւորաբար իրենց երկրի
և Ազգին բարեբար հանգիստացած են :
Մեր մտադիր չեմք՝ ուրիշ ազգաց և
երկրաց մէջ եղածներուն վրայ խօսիլ
և գրել : Մեր նպատակն է պատմագրել
Տարոնոյ և Աշտիշատայ անցքերն, ու
բոց լեռներն ու ձորեր արիւնով չաղ-
ուած են : Մեր ազնիւ Ազգայինք պատ-
մութեան միջոցաւ գիտեն, թէ Տարո-
նոյ երկիր յառաջ քաջերու երկիր և
ղած, և փառաւոր անցեալ մ'ունեցած
է : սակայն այսօր բոլորովին թափուր

լինելով իւր փառքէն, իր որդիք իսպառնկուն եղած են օտարին: Կիչեմ պատուական խորենացւոյ ըսածն, թէ «Հայաստան փոքրիկ ածու մ'եղած է, սակայն իւր մէջէն շատ մեծամեծ գործեր եղած են»:

Անցան բաւական դարեր, յորս Տարոն և Աշտիշատ գաւառներէն ծովային ծաղիկներ կ'ծնէին, և յիշեալ գաւառներ իրենց որդւոց սուրբ արիւնոյն ներկուած քաջեր կ'յարուցանէին: Թողունք Սիկունեանց նահապետութեան քաջութիւններ, որոց շինած ամրոցներ ցարդ իբրև կենդանի վկայ են մեր աչաց առջև: Օղկան ըսուած ամրոցին դուռն՝ որոյ համար Յուռուղ ալ կ'ըսուի, յիշեալ Յուռուղ դիւղի եկեղեցւոյ մէջն է, որ բարձր լեռան ծայրէն մինչև Նփրատ դետ կիջնէ: Մեր նախնի քաջերու շիրիմներն Տարոնոյ Ս. Կարապետու վանուց մէջն են. Մուշեղ, Վահան, Սմբատ և շն: Մեր լուսաւորիչ Ս. Հարց շատերն՝ որոց ծննդավայրն է նոյն

աշխարհ, անդ թաղեալ կան: Մեծն Սահակ՝ Աշտիշատ է. Մեսրոպ Ս. Հայրն՝ Հացիկ գիւղէ էր. Մովսէս ծերուկ Ս. Հայրն՝ ի Խործնք գիւղէ, և այսպէս շատ մը սրբազան հարց շիրիմներ կան թաղուած յիշեալ գաւառներու գիւղի: Յիշատակելով զայսոսիկ կուզենք Տարոնոյ և Աշտիշատ գաւառներու որդւոց հասկացունել իրենց հայրենի փառքն, և կամ իրենց հայրենի երկրի նախնի բարգաւաճեալ վիճակն, որով բոլոր աշխարհի մէջ իբրև դրախտ բարձր ի գլուխ հանդիսացած էր, իսկ այսօր միայն այն փառաց բեկորներ կը տեսնուին, և մեր աչքերէն արեան արտասուք կ'հոսեցունեն: Մեք կարող չենք այն աշխարհներու ամբողջ պատմութիւնն իւրոյս ընծայել. միայն մեր տեսած հնութիւններն մէջ բերելով, կարող ենք մեր նախնի ծերոց աւանդութիւններն նշանակել, որ 100 տարիէ ի վեր մնացած են և միշտ կ'պատմուին Հայաստանի մէջ: Սակայն նախ

արժան կհամարիմք փոքր ինչ ծանօ-
թութիւն տալ յիշեալ դաւառներու
դրից վրայ, տարակոյս չունենալով թէ
մեր սիրելի ազգայինք հաճութեամբ
կընթեռնուն. որովհետեւ սոյն երկիր-
ներ Հայաստանի Հացեաց դրախտն է,
իրենց դիրքն ու դրութիւն Հայաստանի
բոլոր երկիրներէն գեղեցիկ է և պլու-
ղաբեր, իրենց լեռներու և դաշտերու
բնական գեղեցկութիւն՝ մարդուս սիր-
տըն ու միտքն բոլորովն կգրաւէ: Տա-
րոնոյ հին քաղաքի աւերակներ Մշոյ
քաղաքին հիւսիսային կողմն են. Տարո-
նոյ աւերակաց և Մշոյ մէջ տեղն լայն
և ընդարձակ դաշտ մը կայ՝ որոյ եր-
կայնութիւն երկու սուր ճանապարհ
է. սոյն դաշտի արեւելեան լեռանց ստո-
բոսներէն ելնելով Մեղրի ըսուած գետն,
և անցնելով յիշեալ դաշտի մէջ տեղէն՝
կհասնի մօտ արեւմտեան լեռանց ստորո-
տըն, և Նփրատ գետին կխառնուի, իսկ
դաշտի մէջ տեղ հայոց Օձ քաղաքի
ամրոցն է, ուր Վահան իշխան՝ պարսից

ղօրքն ջարդեց. իսկ Մեղրի գետի և
գերքներ շինուած են հայոց գիւղեր,
ուր ցարդ հին նահապետական դրու-
թեամբ կապրին: Տարոնոյ քաղաքի ա-
ւերակներ՝ որ մնացեր են Վահեփանեան
լայն և ընդարձակ ձորի ներքին կողմն,
նոստելով յիշեալ ձորի արեւելեան լեռանց
սրտի վրայ, դէպ ի արեւմուտք Աշտիշա-
տայ աւերակներն կգիտնն. իսկ Նփրատ
գետն՝ որ ցոլալով Վահեփանեան ձորէն
կելնէ, իւր արեւելեան ափերով Տարոնոյ
աւերակները կողջունէ, և արեւմտեան
ափունքն ալ՝ Աշտիշատայ աւերակներն.
բայց սոյն քաջաբնակ աւերակաց մջ
տեղ փոքրիկ դաշտ մը կայ, որ բոլոր
ժողկանոց մայրաքաղաքն է. սոյն դաշ-
տի գեղեցկութիւնը նկարագրել անկա-
րելի է, որովհետեւ անմահութեան լե-
ռան դուռն է, ուր ժողովելով Բիւրակ-
նեան լեռնէն ելած ջուրերն, և անդ ծո-
փանալով ծիծաղադէմ հաղարումէկ
տեսակ ծաղկանց հետ կը ծածանին.
Վահագնի ձորին երկայնութիւնը՝ որոյ

մէջէն Եփրատ կանցնի, 6 Ժամուան չափ երկայնութիւն ունի, բայց իւր գեղեցկութեան նայելով՝ կը կարծես թէ, նախկին մարդու բնակարանն է: Բնական տուններով և ծաղիկներով համակ պնտուած է, արծաթափայլ ջուրք աստուստ և անդուստ լեռներէն ու հովիտներէն խոխոջելով կը հոսեն Եփրատ գետ, թռչնոց դայլայիկներն որ խառըն ընդ ջրոյ կը ներդաշնակին, մեղուաց պարու նմանութիւն կը բերեն, Վահագնի ձորի մէջտեղ փոքրիկ հովտաձև դաշտ մը կայ, որոյ անունն Չորս Հուն կըսուի, Մարաց բարբառով Չար Պհուր. սոյն փոքրիկ դաշտի մէջ քանի մը գետոց հոսանք կմիանան և ամենքն ալ Բիւրակնեան լեռնէն կը հոսեն. Բիւրակնեան հարաւային կողմի ելած ջուրերն ժողովելով Հաշտենիք ըսուած ծաղկաւետ դաշտի մէջ Արածանի գետն կը կաղմուի, և արեւմտեան կողմէն դալով դէպ ի արեւելք, Չորս Հուն ըսուած դաշտի մէջ Եփրատ գետին կը խառ-

նուի, և յիշեալ Չորս Հուն ըսուած դաշտի հարաւային և արեւմտեան լեռներու ջուրերն ժողովելով, Եփրատայ մօտ նոյն դաշտի մէջ Արածանի գետին կը խառնուի. իսկ Բիւրակնեան հիւսիսային կողմի ջուրք ժողովուելով Հարք գաւառ կիջնեն, որ մեր նախնի Հայկայ աշխարհն է, և սողալով ոսկեղէն լեռան տակէն և պտոյտ առնելով կը հասնի Ապահունեաց աշխարհի վարի ծայր, որ Վահեվանեան ձորի վերի ծայրն է, և այն տեղ Եփրատին կխառնուին, և ահա՛ սոյն դաշտն՝ չորս գետոց հոսանքն իւր մէջ ընդունելուն համար Չորս Հուն ըսուած է, Այսպիսի ջրածողով դաշտ մը՝ որ բնութեան բոլոր հրաշալեօք զարդարուած է, ամեն տեսակ տուններ և ծաղիկներ ընդունած է իւր ծոց, և այնքան վսեմ փառքով զարդարուած է, որոյ համար կը վիպասանեն, թէ երբ Աստղիկ չաստուած դալով հիւր պիտի երթայ եղեր Վահագնի չաստուածոյն, յափշտակուե-

լով յիշեալ տեղերու գեղեցկութենէն՝ Արածանի գետի մէջ լուացուեր է . և կրսեն թէ հաւի՛ն հրեղէն եկաւ երկինքէն , յԱրածանի գետ թափեց Վրայի կեղտ , և ասոր համար Մեսրոպ Գաւիթ Թաղիգեանցն ալ իւր Սոս և Սոնգիպի փոքրիկ դրքուկի մէջ ըսած է թէ , առ Արածանի Գուարեան գետոյ , Աստղիկն իջանէր մաքրիլ յարատոյ :

Վահագնի համար պէտք չէ որ մեք կասկած ունենանք . բաղմայայտ է թէ Հայկազանց Տիգրան Նրեւանդեանի որդին էր , որ գնալով Ասորւոց Բաղչամ չաստուածն ի գերութիւն վարեց և դրաւ իւր աշխարհի մէջ ի նշան քաջութեան իր որդւոց : Յայտնի է որ Վահագնի պատկեր Տարոնոյ երկրի մէջ կանգնած էր , և Հայաստանի բոլոր Ժողովուրդն համախմբելով Տարոնոյ մէջ , հաշտութեան զոհեր կմատուցանէին . և այս պատճառաւ այն գաւառի կամ երկրի անուն՝ Աշտիշատ ըսուեցաւ : Վահագնի պատկեր՝ մինչև ցգալուստ

Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի՛ Հայաստանի մէջ կը պաշտուէր . և երբ մեր Ս. Հօր ձեռօք յիշեալ պատկերն խորտակեցաւ , և նոր եկեղեցի հաստատուելով , եկեղեցեաց սեղանի վրայ սուրբ Խաչ և Աւետարան դրուելով կը պաշտուէր , Ժողովրդեան դարձեալ նախանձելի էր իրենց նախնական սովորութիւնն : Ժողովուրդն եկեղեցւոյ մէջ Ս. Մկրտութեան աւազանի վրայի քարն , օձաձև պատկեր և եկեղեցւոյ դրան վերի բալաւոնի տեղ՝ վիշապաձև փորուած քարէ արձաններ կը դնէր . և սոյն վիշապաձև քարէ արձաններէն մէկ քանին կը դնուին Վիշապ քաղաքի աւերակներու ներքեւ : Սոյն քաղաքին աւերակներ կից են Աշտիշատայ , և կէս Ժամ հաղիւ հեռաւորութիւն ունին . կարծիք կայ թէ , բուն քաղաքն այն է եղած , և Վահագնի պատկերն ալ քաղաքէն դուրս ուխտատեղի եղած է , որ հիմայ Աշտիշատ կը կոչուի , ո՛ւր Մեծին Պալթիկ Սահակայ՝ մեր Ս. Հայրուպետի

գերեզմանն է : Իսկ Վիշապ քաղաքի պարտէզներ՝ որ կից են Աշտիշատայ պարտէզներուն , ամայի մնալով՝ բնական անտառի պէս եղած են . բոլոր կենդանեաց տեսակէն կան իւր մէջ . և մրգեղէնք փոխելով իրենց քաղցրութիւնը՝ դառնացած են , ինչպէս նշենին :

Գալով վիշապաձև նկարագրուած քարէ արձաններու՝ ահա երկու հատ դեռ Ավրան գիւղի գերեզմանատանց մէջ կան , զորս տապանաքար ըրած են , և որոց մէկը հինգ կանգուն երկայնութիւն ունի , և կիսով չափ թաղուած է հողի մէջ , և երկրորդն ալ եկեղեցւոյ դրան մօտ տապանաքար ըրած են : Ավրամ ըսուած գիւղն Աշտիշատայ հաւաքային կողմին մօտ է . հին ժամանակներն 1000 տունէն աւելի բնակիչ ունեցած է . սոյն գիւղի հին անուն Առան եղած է : Ուղեցիներ վիշապաձև արձանաց վրայ աւանդական ծանօթութիւն առնուլ . ծերեր ըսին թէ , ի հնուց մը նացեալ կռապաշտից գերեզմաններ են .

և կըսեն թէ , Վահագնի թոռներէն մը նացեալ բաներ են : Ավրան գիւղին մօտ քանի մը գիւղեր կան , որ աւերակ են , և ոմանց մէջ քանի մը տուն վայրենի քուրտեր կը բնակին . ասոնց մէկն է Կէմիք ըսուած գիւղն , ուր յառաջագոյն 1500 տան չափ Հայ բնակիչ գտնուած է . այս գիւղ Ավրան գիւղի արեւմտեան կողմն է . որ բուն իսկ նահապետութեան վայրերն են :

Անցան դարեր , յորս սոյն գաւառներ Հայաստանի մէջ բարձրագլուխ կը պարծէին , և սոյն երկրի անունը ամեն ուրեք կը փայլէր . իւր որդւոց սուրբ արիւնով , քաջութեան ծաղիկներով միշտ կը բեղմնաւորէր , շատ ժամանակներ սոյն երկիրներն խաղաղ էին . եկաւ Արարացւոց և Հագարացւոց արշաւանաց ժամանակն . թէև Հայաստանի երկիրներ սոյն արշաւանաց կոխան եղած կուարէին , սակայն Տարոնոյ և Աշտիշատ գաւառներ դարձեալ քաջութեան արիւնով ներկուած էին , և ոչ ոք կա-

բող չէր մուտ գործել այն դրախտա-
վայր լեւներու և դաշտերու մէջ . և
մինչև անգամ յիշեալ երկիրներու ա-
ռած եղած է թէ՛ օձն իր պորտով , և
հաւք իրենց թևով չկարողացան մտնել
այն պարտէզ . Արդարև Հայաստանի
մեծ մասն Պարսից , Արաքացւոց և Հա-
գարացւոց արշաւանքներէն կաւերէր .
իսկ երբ Տարոն և Աշտիշատ գաւառ-
ներուն կը մերձենային , արեւոյն հեղեղն
առնելով իրենց դիւերն եփրատ գետն
կը տանէր . Պարսիկք առած են ասոր
փորձը , թէև Հայաստանի մէջ շատ մը
կոթողներ կան և պատմութիւն կլկա-
յէ , բայց Աշտիշատայ մօտ Մանրավանից
ձորակի անունը կը յայտնէ , որ Խորտակ
ձոր կըսուի . և այն տեղ սաստիկ ջարդ-
լինելով պարսից՝ մեծին Վահանայ ձեռ-
քով , մարդոց արիւն հեղեղելով այն ձո-
րի հետ գլուխն գնացեր է :

Արդ՝ երբ արտաքին թշնամին նը-
կատեց , թէ անկարելի է Տարոնոյ և
Աշտիշատայ քաջերն բռնութեամբ նուա-

ձել , խորհեցաւ սին փառքով որսալ նո-
ցա սիրան , և բաժանում ձգելով նոցա
մէջ իրենց հայրենի փառքն օտարին վա-
ճառել . այսպէս մերայինք սկսան օտա-
րէն փառք մուրալ որ խաղառ անկարե-
լի էր , և այսպէս մեր հայրենի փառքն
ալ մատնուեցաւ օտարին , և Հագարա-
ցիք մուտ գործելով մեր հայրենի աշ-
խարհին տիրեցին : Թէև Տարոն և Աշտի-
շատ գաւառներն մտած կը տիրէին , սա-
կայն յիշեալ աշխարհի ժողովուրդն դեռ
ազատ էր , միայն մասնաւոր հարկ մը
կը վճարէր Հագարացւոց իշխանին , և
ազատ նստելով իւր կալուածոց վրայ ,
նահապետական դրութեամբ հողագոր-
ծութեան կղբաղէր . Բայց Մետացի և
կամ Մարք ըսուած քուրտերն , որ ի-
րենց դրութեամբ միշտ սովոր են կրօ-
նից ի կրօնս փոխուիլ , երբ Հագարա-
ցիք մուտ գործեցին այն կողմերն , կը-
րօնապէս Հագարացւոց հետ միացան ,
և սոյն դրութեամբ Հայաստան աշխար-
հի բոլոր փակեալ դրունքն բացուեցան

Մարաց առջև . Հայաստանի մէջ ո՛ւր
ուզէին կարող էին վրանաբնակ լինիլ .
Մարաց բարբարոս խուժանն՝ որ մլան-
ցի ալ կըսուի , 40000 տունէն աւելի
քուրտեր են , սորա յառաջ Բիւրակներան
լեռան կը ցանկային , և երբ այսպէս
պատեհ գտին , յոյժ սիրելի եղև իրենց՝
ամառն միշտ Բիւրակներան լեռները վը-
րանաբնակ լինիլ , և ձմեռն Տիգրանա-
կերտի կողմեր , Մարք իրենց ճանապարհ
որոշեցին , Սփրան և Կէմիք գիւղօրէից
սահմաններու մէջէն անցնելով , Վիշապ
քաղաքի պարտէզներու վրայէն Բիւրակ-
ներան լեռն կելնէին : Թէև սոյն ճանա-
պարհորդութեան անցուղարձն կը լինէր
յիշեալ գիւղօրէից սահմաններու մէջէն ,
բայց սաստիկ պատուէր կար իրենց մէջ
որ Հայոց գիւղերուն ֆրատ մը չորուի .
և եթէ պատահամբ երբեմն լինէր ,
անմիջապէս սրի ծայրով կը տուժուէր ,
վասն զի դեռ հայութեան կայծն վառ
էր . Մարաց ազգ իւր շարունակութիւն
Հայաստանի մէջ անֆրատ կերպով կընէր ,

միայն քանի մը օր ետ դառնալու ժա-
մանակ Վիշապ քաղաքի պարտէզներու
պտուղներէն կուտէին , և անցնելով կեր-
թային ի Տիգրանակերտ : Հայոց ժողո-
վըրդեան միտքն մեռածի պէս եղաւ ,
ուսման և գրականութեան մասին ան-
թիւ թշնամիներ եղեն , հասնողն Հա-
յաստանի հին և նոր գրքերն այրեց .
Հայերն ուրիշ խորհրդածութիւն մը չու-
նէին , միայն իրենց նախնական նահա-
պետական կացութիւնն անփոփոխ պա-
հելով հողագործութիւն կընէին , և ի՞նչ
որ հազարացոց որոշեալ հարկն էր՝
զայն Հազարացի իշխանին կը վճարէին ,
և նստելով իրենց հողի վրայ կապրէին .
Հայոց սոյն անփոփոխ կացութիւնը
պատճառ եղաւ Մարաց բարբարոսու-
թեան , վասն զի որչափ որ Հայեր խա-
ղաղասէր էին , այնքան աւելի Մարք զօ-
րութիւն առին , և սկսան աջ ու ձախ
մեծամեծ ֆրատներ տալ Հայոց , Կէմիք
գիւղացիք երբ նկատեցին որ սոյն դը-
րութեամբ ալ իրենց հողի վրայ նստիլ

հնար չէ, երկու ելք խորհեցան, — կա՛մ վատութեամբ թողուլ իրենց հայրենի աշխարհն և ուրիշ երկիր դադթել, և կա՛մ քաջութեամբ դիմադրելով՝ իրենց հայրենի հողի վրայ մեռնիլ : Հոսկի ուրեմն լաւ համարեցան իրենց հայրենի աշխարհի մէջ մեռնիլ քան թէ վատութեամբ թողուլ իրենց երկիրն և յօտաւորութիւն դադթել : Պատգամաւոր զըրկեցին Մարաց, որ իրենց ճանապարհորդութիւնն առանց ֆրասուց շարունակեն, եթէ ոչ՝ ապագայից փոթորիկներէն մեծամեծ ֆրասներ կը ծնին և պատասխանատուութիւնը անհաշտ պիտի մնայ ձեր ու մեր մէջ : Սոյն լուրը Մարաց բարկութեան կիրքն աւելի կը բորբոքէ, և կսկսին մեծամեծ ֆրասներու ձեռնարկել : Իսկ Հայեր որչափ որ անփոփոխ կեանք մը կը վարէին, սո՛յն դազանական վարմանց դէմ անտարբեր չկարողացան մնալ, հայութեան ներքին արդար ցասմամբ ի վրէժ բարկութեան բրդեցան, և յարձակեցան Մարաց մեծ

բանակի վրայ՝ ի վրէժնդրութիւն : Սոյն յարձակմամբ՝ Մարաց մեծամեծ ֆրասներ տալէն զկնի՝ մինչև Վիշապ քաղաքի աւերակներ վարեցին իրենց սահմաններէն դուրս : Թէև Մարք ուղեցին զՀայո բնաջինջ առնել, սակայն դեռ Հայք իրենց երակներու մէջ քաջութեան արիւն ի պահ ունէին, անվրդով սրտիւ յարձակեցան Մարաց բազմութեան վրայ և անխնայ աւարի առին իրենց վաղեմի ֆրասուց տեղ : Հագարացի իշխանըն՝ որ այն միջոցին Մշոյ քաղաքի ամբոցն կը նստէր, իսկ յեղափոխութեան լուրն առնելով՝ մտաբերեց յօգնութիւն Մարաց, սակայն Հայոց եռանդն որ նոր սկսած էր, միշտ բազմանալով առաջ կերթար, և Հագարացիք զայս տեսնելով՝ իբրեւ խաղաղասէր ոք մտնելով Հայոց և Մարաց մէջ՝ խռովութիւնը մարեցին և առանց արիւնահեղութեան մէկզմէկէ դատեցին :

Երբ Մարք սոյն ֆրասներով Բիւրակնեան լեռ իրենց ամարային տեղերն

կը հասնին, մտաբերելով իրենց ֆրանսէ-
րըն զոր ի ձեռն Հայոց կրած են, ի
սիրտ և ի հոգի զայրացեալ՝ կուզեն ի-
րենց ֆրանս պահանջել Հայերէն, և դի-
պօղ տութի կապասէին որ դազանաբար
Հայոց վրայ յարձակին, Մարք այս խոր-
հըրդոց վրայ հաստատ լինելով կտոչո-
րէին թէ, ե՞րբ ժամանակ պիտի գայ որ
Բիւրակներան լեռնէն ետ դառնալնուն
վրէժ պահանջին, սոյն կրից ամբողջու-
մըն չթողուց որ իրենց որոշեալ ժամա-
նակն հասնէր. ձայն տալով միմեանց՝
շուտով զօրաժողով կազմեցին Բիւրակ-
ներան լեռանց մէջ, և մաս մաս բաժ-
նուած՝ մեծամեծ կարավաններով իբրու
յորձանս հեղեղաց Բիւրակներան լեռնէն
զառ ի վայր թափելով Վիշապ քաղաքի
պարտէզներու մէջ կընակէին. իսկ կէ-
միք գիւղացիք քաջ խելամառած էին
Մարաց գազանութեան. ընկեր զընկեր
կը քաջալերէր, և օրէ օր կը շատնային.
հայութեան դաշտերու մէջ կրկին քա-
ջութեան ծաղիկներ ծլելու վրայ էին,

և դեռ նախկին պտուղներու սերմէն կը
գտնուէր Վահագնի գաւառի մէջ. ի
վերջոյ՝ Հայեր փոքրիկ բանակ մը կազ-
մեցին Մարաց ստուար բանակի դէմ,
դրութիւն դեռ նահապետական էր՝ ո՛վ
շահուէր և ո՛վ վնասուէր սոյն պատե-
րազմի մէջ իրեն կը մնար. Հայեր չէին
կարծեր թէ Հազարացիք կրօնական
բաճկոն պիտի հագցունեն խնդրոյն.
Այսպէս նախ Մարք լի՝ դողողութեամբ
յարձակեցան Հայոց վրայ, և Հայերն
սաստիկ դիմադրելով՝ պատերազմը
սաստկացաւ Այրան և կէմիք գիւղօրէից
սահմաններու մէջ, շատ դիակներ յեր-
կիր կործանեցան. և կարծես թէ, դե-
րանդիով խոտ կը հնձուէր. Մարաց բազ-
մութիւն երկիր փռուելով արեան հե-
ղեղի մէջ կը լողար, և մնացեալք ետ
դառնալով ի փախուստ կաճապարէին.
ոմանք ի ձորս և յանտառս զօղելով կը
թաքչէին, իսկ մնացեալք անձնատուր
լինելով գութ և կարեկցութիւն կխնդ-
րէին Հայոց երիտասարդներէն. կար-

ծես թէ մարդասիրութիւն քրիստոնէից ազգին տրուած է . երբ Մարք բոլորովին անձնատուր կը լինէին՝ Հայք նոցա կեանք շնորհելով ի խաղաղութիւն կարձակէին . իսկ Մարք՝ ազատելով այսպէս՝ դարձեալ Վիշապ քաղաքի աւերակաց շուրջը բանակեցան . Հագարացիք՝ որ տիրած էին Հայաստան աշխարհի , իրենց քաղաքապետին կատարեալ չէին հնազանդեր . իւրաքանչիւր ոք ինքնագլուխ տէր էր . Հայաստանի բոլոր դաւառներ բաժնուած էին Հագարացի իշխաններու մէջ . արքունի հարկ և տուրք մը չունէին , և շատ անգամ միմեանց դէմ պատերազմելով կուգէին միմեանց վրայ տիրել , որոց օրինակներն դեռ կը գրանուին . երբեմն ալ Տէրութեան դէմ կապտատամբին : Թէև Մշոյ մէջ ամրացող Հագարացի իշխան խնդիրը կրօնականի վերածեց , սակայն միջոցն իրեն չօգնեց , որովհետև Հայոց ժողովուրդ աւելի պարտաւորուած էր իր պարանոցն քաջութեամբ նուիրել բռնութեան սրոյ

դէմ , և պատերազմն օր ըստ օրէ կը սաստկանար , երկու կողմն ալ միմեանց դէմ խիզախելով պատերազմ կ'սպառնային . շատ չմնաց որ դարձեալ Աշտիշատայ դաշտերն ու լեռներ արիւնով ներկուէին . երբ Հագարացիք նկատելով թէ պատերազմի ասպարէզն իրենց չօգնէր՝ կեղծ խաղաղութեան միջոց մը հնարեցին թէ , ի՛նչ ըսել է որ մեք մեր հարկատու ժողովուրդոց իրաւունքը թողունք և դադան Մարաց ազգի հետը միանանք , որովհետև ժողովուրդն է մեզ հարկատու . զայս ըսելով Հայոց սիրան ու միտքն ամոքեցին ի խաղաղութիւն , և որոշեցին որ Հայք տարեկան փոքրիկ տուրք մը վճարեն Մարաց՝ այսքան տուած փաստներնուն տեղ , իսկ Հայք՝ որ նախատեսութեամբ գիտէին թէ իրենց հարկատու լինելն զիրենք ապագային մէջ աւելի փաստուց կենթարկէ , իսպառ մերժեցին հարկատուութիւնը . դարձեալ յուզուեցաւ խնդիրն , և կուգէին քաջութեամբ մեռնիլ քան թէ վա-

տութեամբ Մարաց հարկատու լինիլ .
անյողդողդ պատասխանեցին թէ մէկ
աւանակի ջիւ ալ իբրեւ հարկ տալու ժա-
մանակ չունինք Մարաց : Այսու ամե-
նայնիւ , Հագարացիք երկու կողմն ալ
ի խաղաղութիւն կը յորդորէին . Մարաց
կըսէին թէ , ի՛նչ անարդ հարկ որ տա-
լու լինին՝ ընդունեցէք , կը բաւէ որ
հարկի անունով տրուած լինի . Հայոց
ալ կըսէին թէ , ի՛նչ որ դուք կուզէք՝
զայն տուէք իբրեւ հարկ , որպէս զի ա-
րիւնհեղութեան վերջ տրուի . ի՛նչև իցէ ,
Հայոց տգէտ մասը ընդունեց որ տար-
ուէ տարի մէկ աւանակ իբրեւ հարկ վը-
ճարեն Մարաց . նոքա ալ ընդունելով ,
ըստ սովորութեան բաղմութեամբ դնա-
ցին ի Տիգրանակերտ :

Պէտք չէ կարծել , թէ Հայերն ա-
մեն տարի այսպէս յաջողութեամբ կը
միանան , որովհետեւ ժողովող գլուխ
մը չունէին , որ ցրուեալ մարմինները
միշտ ամփոփ պահէր : Թշնամոյն նպա-
տակն Հայոց միութիւնը քակել էր , և

դիպօղ առթի կապասէր : Եկաւ ժամա-
նակն որ Մարք իրենց հարկն պահան-
ջեն . Հայոց նախկին միութիւնը յայն-
ժամ քակուած էր , և Հագարացի իշ-
խանը այլ և այլ խոստումներով և պաշ-
տօնով Հայոց միութեան ամրոյն տա-
պալած էր , Մարք դաղանութեամբ այն-
պիսի ծանր հարկերու ենթարկեցին
զկէմիք դիւղն , որ եռապատիկ քան
զՀագարացւոց ծանր էր . թողունք ներ-
քին և արտաքին բռնութիւններ , որովք
անխնայ կը կեղիքէին և կը հարստահա-
րէին զՀայոց ժողովուրդ . չկա՛յ ստըր-
կութեան օրինակ մը , որ նախկին դա-
րերու մէջ եղած ըլլայ , և մեք անկից
օրինակ առնելով ծանօթութիւն տանք
ընթերցողաց . պատառող գայլից պէս
խուճք խուճք կը յարձակէին Հայոց հօ-
տի վրայ և իրենց դադանական կիրքն
կը յագեցնէին . մեծ էր Հայոց ծառա-
յութեան լուծն քան զեգիպտական հար-
ուածներ , զորս ի հնումն իսրայէլացիք
կը կրէին : Սոյն անտանելի բռնութիւն

պատճառ եղաւ որ շատերն՝ իրենց կը-
րօնքն փոխեցին, և այն բարգա-
ւաճեալ գաւառներ կիսով չափ քակ-
ուեցան, Կէմիք գիւղն՝ ուր 1500ի չափ
տուն կար, հաղիւ 500 աղքատ տնակ
մնաց, ոչ ոք կար որ Հայոց գութ և
խնամք տանէր, և շատ անգամ Հայեր
իրենց անձնական շահուց համար զմիմ-
եանս կը մատնէին:

Մինչդեռ Հայոց ժողովուրդը սոյն
ծառայութեան լծոյ ներքև ճմլուած կը
տապակէր, դարձեալ Երկինք խնամք
տանելով Հայաստանի ազատութեան
համար՝ Աղեկսանդը անունով անձ մը
յարոյց: Սա հասարակ հողագործ
մ'էր. ոչ դպրոց մտած էր, և ո'չ ալ
բնապէս ու դերբնապէս զարգացեալ.
նահապետական դրութեամբ իւր դուռն
ամեն եկողաց բաց և պատրաստ էր, և
սիրուն ասպնջականութեամբ եկողն մե-
ծարելով ճանապարհ կը դնէր: Սորա
առաքինութիւնը ամեն ուրեք կը փայ-
լէր. գութն ու խնամքն միշտ անպա-

կաս էր իր ժողովրդեան վրայէն. յայտ-
նի կերեւէր թէ Երկինք յարուցած էր
դսա սուրբ արիւնով Տարոնոյ և Աշտի-
շատայ ժողովրդեան անհամութիւն հա-
մեմել. Կէմիք գիւղի մէջ քանի տուն
ալ կային որ Աղեկսանդրի հաւասար
մարդիկ էին, սակայն ոչ ոք այն նպա-
տակն ու խորհրդածութիւնն չունէր.
միայն ինքը միշտ ցաւօք սրտի յողւոց
կը հանէր, Հայաստանի փրկութեան
համար կը մաշէր, և կուգէր Մարաց
բռնութենէն ժողովուրդն ազատել: Սո-
վորութիւն եղած էր Հայաստանի մէջ,
որ երևելի մեծամեծներ իւրաքանչիւր
ոք իւր բարեկամաց ուրախութեան հը-
րաւէր կը կարդար ի սեղան ուտելեաց
և ըմպելեաց. այսպէս օր մը Աղեկսան-
դըր իւր գիւղի բոլոր համբայից ուրա-
խութեան հրաւէր կարդաց. սոյն խըն-
ճոյք որչափ որ բերկրառիթ էր, այն-
չափ և աւելի ազատութեան խօսքեր կըլ-
լային: Աղեկսանդը սեղանի վրայ սկսաւ
խօսիլ այսպէս. — « Հայե՛ր, իրաւ ես կը

զարմանամ, ի՞նչ է պատճառը, որ մեք
գերի եղած ենք Մարաց ձեռք. մեք հա-
ւասար մարդ ենք. կուզեմ ըսել թէ,
բոլորս ալ հաւասար կը ծնինք և հաւա-
սար կը մեռնինք, միշտ մեք Մարաց
ձեռքէն կը կեղեքուինք ու կսպանուինք,
ուստի կը խնդրեմ որ ատոր բուն սլա-
ճառն ինձ բացատրէք:» — Պատասխանե-
ցին թէ «մեք ևս ձեզ նման տեղեկութիւն
չունինք այդ մասին. միայն կը լսենք
որ եկեղեցւոյ մէջ հեղութիւն և խոնար-
հութիւն կը քարոզուի, և հեղութեան
հեղինակն ալ՝ Գրիստոսն է. կարելի
է որ ի սէր Գրիստոսի սոյն չարչարանաց
ենթարկուած ենք:» Կէմիք գիւղի մէջ
Վահագնի թոռներէն քահանայ մը կայ,
որ հին ու նոր ժամանակաց պատմու-
թիւններ գիտէ եղեր. անմիջապէս կը
հրաւիրեն զնա, որ գալով իրենց կար-
ծիքն փարատէ. դեռ քահանան չեկած,
Աղեկսանդր իւր ընկերներով ընկղմած
էին այլ և այլ խորհրդոց մէջ թէ,
մեք իսրայէլացի ենք, և մեր հայ ժո-

ղովուրդն էր՝ որ Եգիպտոսի մէջ կը կե-
ղեքուէր ու կը հալածուէր: Քահանան
մտաւ ներս, ժողովուրդն ըստ հայկա-
կան հին սովորութեան պատուելով վեր
անցուցին, և հուսկ ուրեմն սկսաւ Ա-
ղեկսանդր մեղմ կերպով հարցում ը-
նել քահանային: —

Տէ՛ր տ'ը, ծառայ եմ, չբարկա-
նաս. Աստուած ինչո՞ւ մեր ազգն գերի
ըրած է ուրիշ ազգաց. ո՞չ ապաքէն
մեք ևս մարդ ենք, ինչպէս որ ուրիշ
ազգեր:

Քահանայն. — Աղեկսանդր, Նա-
խախնամութիւն զմարդիկ առ ի ստրկու-
թիւն չէ արարչագործած, բոլորն ալ
ազատ են, սակայն մարդկան դազա-
նութիւն է, որ զմարդն բռնութեան
հարկի կենթարկէ: Մէկ կողմէն կա-
տարեալ գաղանթութիւն կը լինի, և միւս
կողմանէ ալ չափէ դուրս հնազանդու-
թիւն, և այսպէս մարդոց մէկ մասն
իբրեւ գայլ կը լինի, և միւս մասն ալ
իբրեւ ոչխար միշտ գաղանթի ձեռքէն կը

հալածուի, այս իսկ է ստրկութիւն :

Աղեկսանդր. — Հայր պատուական, անցեալներն եկեղեցւոյ մէջ ըսիք թէ, Իսրայէլացիք Եգիպտոսի մէջ կը հալածուէին. արդ՝ քանի որ մեր Ժողովուրդն առաջնոց գերի եղած է, երբ ազատ եղած ենք մեր :

Քահանայն. — Մեր բնիկ իսրայէլացի չենք, մեր ազգութեան ծագումն քան զԻսրայէլացւոյն յառաջ է. մեր նախահայրն Հայկն է. մեր Թագաւորութիւն շատ ճոխ էր, աշխարհի մեծ մասն Հայոց ձեռքն էր. մեր նախահարք շատերէն հարկ կառնէին. իսկ այժմ մեր օտարին հարկատու և գերի եղած ենք :

Աղեկսանդր. — Տէր՝ տէր. ծառայ եմ, ձեր ըսածներ գրուած են գրքերու մէջ, թէ՛ դուք ուրիշ տեղէ լսած էք և վիպասանութեան պէս կը պատմէք :

Քահանայն. — Մեզ ուրիշ պատմութիւն կայ, ինչպէս որ Սուրբ Գիրքն

Հոգւոյ ներշնչութեամբ Մովսէս մարգարէն դրեց, այնպէս ալ Հայոց համար զատ պատմութիւն կայ, զոր Խորենացի Մովսէս վարդապետ գրեց. մեր պատմութիւն ուրիշ ազգաց պատմութիւններէն աւելի հաստատ է. վասն զի օտար ազգաց Թագաւորութեան դիւանատուններէն ելած և հաստատուած խօսքեր են :

Այս խօսակցութեան վրայ, Խորենացւոյ պատմութիւնը բերել տուին, և որչափ գրագետք կային Կէմիք գիւղի մէջ՝ բերել տուին. յիշեալ գրագէտներ սկսան Հայոց պատմութիւնը կարդալ և բացատրել Աղեկսանդրի և իւր համբաւից. — Հայկայ յաղթութիւնն՝ որ փոքրիկ բանակով մը Տիտանեան անբաւ բազմութեան յաղթելով ցրուեց, — Արամայ ընդարձակ Թագաւորութիւնը, որ ծովէ ի ծով տիրելով կուզէր որ միայն Հայ բարբառով խօսին. — Տիգրան Երեւանդեանի պատերազմն ու յաղթութիւնը, որ քաջութեամբ կռուելով

Մարաց Աշդահակ թագաւորի հետ՝
զայն սպաննեց, ի վերջոյ՝ հետաքրքրու-
թեամբ մինչև ցրարձումն թագաւորու-
թեան՝ Խորենացւոյ պատմութիւնը կար-
դացին։ Աղեկսանդր իւր համբայներով
յապուշ կրթած էին, որովհետեւ սոյն
պատմութեան ո՛չ ոք տեղեկութիւն չու-
նէր։ Ներկայ եղող անձանց սրաի վը-
րայէն փարատեց այն կարծիքն որ կ'ը-
սէին թէ, մեր ազգն ի բնուստ գերի
եղած է, և կամ սոյն մոլար դրու-
թեամբ իրենք օրէնք մը կատարած կը
լինին։ Քանի մը նորահաս տղայք կային
յիշեալ քահանայի քով ուսանելու հա-
մար։ Ըսաւ Աղեկսանդր՝ — կաղաչեմ՝
ձեզ, որ այսուհետեւ սոյն պատմութեան
գրքերն տղայոց դաս տայք, քան թէ
ուրիշ օտարի գրքեր, որովհետեւ տգի-
տութեան պատճառաւ ամենուն ոտնա-
կոխ եղած եմք։

Կարծես թէ ներկայ եղողներուն
մտաց վրայէն բռնութեան կապերն
յնկուեցան։ ազատութեան լուսաւոր

աստղն ամենուն ճակատուց վրայ կը
շողշողէր։ Բաղմութիւն ցրուեցաւ։ Ա-
ղեկսանդր իւր համբաներով խորհիլ ըս-
կըսան Մարաց ըրած գաղանութեան
վրայ, և ուշադիր լինելով նոցա ըրած
բռնութեանց՝ որ զիրենք ճմլած էին,
և իրենց վատութիւնը մտաբերելով ա-
ւելի կը ցաւէին, որ իրենց այսքան հա-
լածման բուն պատճառն իրենք եղած
են, և ներքին ջերմութեան զօրութե-
նէն քրտանց վիժումն զիրենք ջուր ը-
րած էր։ Անցան քանի մը օր, ամեն
սիրտ ու միտք ազատութեան խորհուրդ-
ներով ուրախ էր, խելամոելով թէ ի-
րենք ի բնէ ազատ ստեղծուած են։ Ա-
ղեկսանդր ուրախութենէն իւր գիւղի
երեւելիքը դարձեալ ժողովեց, և իրենց
նախկին խորհրդեան վրայ ուզեց հաս-
տատ տեղեկութիւն մը առնուլ։ Ըսին
համբայք, « եթէ միութեան մասին նոր
խօսքեր պիտի խօսիս մեր հետ, արդէն
մեք առաջին տեսութեանց մէջ սոյն
խնդրոց նկատմամբ միացանք, և ըսինք՝

ինչպէս որ Աստուած մի է, մեր խնդիրն ալ մի է. միայն կուղենք Մարաց բռնութենէն ազատիլ. Մարաց բռնութեան պատճառաւ տարին երկու անգամ արիւն կը վաղէ մեր դաշտի մէջ, և սաստիկ հեղեղի պէս զմեզ արմատախիլ կընէ, և չստանա՞նք հագարացւոց ալ ֆլաս կուտան:» Աղեկասնդրերը նկատեց, որ եղբարց սիրտն ալ կապուած է իւր սրտի հետ, և ամենքը կուզեն որ Մարաց բռնութեան ճանկերէն ազատին, անյողդողդ սրտիւ ըսաւ թէ, կը բաւէ որ մեք մեռելոց երանենք, մեռեալք քան զմեզ երջանիկ են. վասն զի վատութիւն մեր սրտի մէջ ունակացեր է. երկիւղով կաշկանդուած ենք, կը խորհինք թէ չը մեռնինք. բայց ամեն օր Մարաց բռնութեան մէջ մեռած ենք, և մեր հարք անոնց ձեռքով չարաչար սպանուած են. եթէ մահ մարդկան համար բնական է, ուրեմն ի՞նչ հարկ կայ որ մահուանէ երկնչինք. աւելի լաւ է աղատութեամբ մեռնիլ և

աշխարհի մէջ անմահ անուն թողուլ, քան գերութեան մէջ մեռնիլ: Ահա քիչ մնաց որ Մարք Տիգրանակերտի կողմերէն դալով Բիւրակնեան լեռներն պիտի երթան, քանի մարդ սոյն գիւղի մէջ իրենց հարկի համար ծեծելով պիտի սպաննեն, ուստի թէ որ ինձ լսելու լինիք՝ Մարաց հարկ տալու ժամանակ չունինք, և ի՞նչ որ պիտի ըլլայ, թող շուտով ըլլայ: Սոյն խօսքերը ամենուն ալ հաճելի էին. ամենքն ալ սրտի մաքրութեամբ միմեանց հետ կապուեցան. ամենուն աչքին ալ մահ սիրելի էր քան թէ միշտ մնալ Մարաց ձեռք գերի: Արդարեւ սոյն խնդիրն միայն կէմիք գիւղի մէջ եղած էր, և միայն կէմիքն էր հարկատու Մարաց, բայց ֆլասներ բոլոր Հայոց միւսնոյն էր: Աւրան գիւղ՝ որ սահմանակից էր կէմիք գիւղի, ոչ ինչ պակաս քան զկէմիք կը ֆլասուէր. յիշեալ Աւրան գիւղի մէջ յառաջագէժ իշխան մը կար, որոյ անունը Տօնիկ էր.

Աշտիշատ գաւառի երևելի Տօնիկ իշխանըն. Աղեկսանդր շատ սիրելի էր ամա. սոյն խորհուրդներ անոր յայտնեց, Տօնիկ իշխան յոյժ ուրախացաւ, վառնդի ի վաղուց անտի իւր սրտի մէջ այդպիսի խորհուրդներ կային. բայց չկար իրեն հաւասար և սրտակից մէկը, որ իւր սիրտը անոր բանար, ուստի ծանոյց Աղեկսանդրի, թէ ի մահ և ի կեանքս գործակից է իրեն, սակայն նախ հասուն մտօք խորհելու են, և ապա գործելու: Տօնիկ իշխան սոյն համառօտ խրատն տուաւ Աղեկսանդրի թէ, խղճի տպահովութիւնը միայն աղատութեան մէջ է. մեք փառաց համար չենք խորհիր և գործեր, միայն կուգենք Մարաց բռնութենէն աղատիլ որ խղճով Աստուծոյ ծառայութիւն ընենք, մեր նպատակն բարի է. ուրեմն Աստուած գործակից լինի. միայն պէտք է մեզ որ խորհրդով գործենք, Աղեկսանդրը սոյն հաւանութեան խորհուրդն և

բարի խրատներ առնելով՝ կէմիք վերագարձաւ և իւր իշխանաց հետ աղատութեան ելք կը խորհէր:

Սոյն ինչ բռնութեան ժամեր ճմլելով զՀայն՝ կանցնէին, Մարաց բազմութիւն խումբ խումբ կարաւաններով Տիգրանակերտէն Բիւրակնեան լեռներ կերթան ըստ նախկին սովորութեան, Աղեկսանդր խաղաղութեամբ բոլորն ալ ճանապարհ դրաւ ըստ խրատու Տօնիկի, եկաւ խոտ հնձելու ժամանակն. Հայոց քաջ երիտասարդք տրամադիր էին խոտ հնձել, և իւրաքանչիւր ոք իւր գերանդին կը պատրաստէր. Մարաց բազմութենէն խումբ մը Բիւրակնեան լեռնէն յարձակելով ըստ վաղեմի սովորութեան մտին ի կէմիք գիւղ, կուգէին յիշեալ գիւղն իրենց չար կրից զոհել. վերբայ տին բարբարոսութեամբ յարձակեցան ժողովրդեան վրայ հարկ պահանջելու համար. գիւղի իշխան Աղեկսանդր ուրիշ պատճառաւ մը դուրս գնացեր էր.

ոչ ոք չեղաւ որ Մարաց սիրտն շահէր նոյն միջոցին, Մարք կատաղելով աւելի վայրագ գրութեամբ կվարուէին. սակայն Հայոց տղայք՝ որոնք պատրաստ կը գտնուէին՝ յարձակեցան Մարաց վերայ, սաստիկ գանակոծելէն յետոյ բոլորն ալ կողոպտեցին, և խայտառակութեամբ գիւղէն վարելով դուրս ըրին. և այս միջոցին Աղեկսանդր գիւղ մտաւ, թէև սա մտադիր էր, որ Մարաց հարկ չտրուի, բայց դիպող ժամու կսպասէր որ աւելի վայելուչ գործեր ընէր, սակայն և այնպէս ուրախ էր, որ երկտասարդ տղայք քաջութեամբ գործ մը տեսած էին, իսկ փախուցեալ Մարք գնալով իրենց բանակն՝ ամեն անցքերն պատմեցին լի ու լի: Մարք՝ որ ի բնէ գոռող են և ժեծասիրտ, կսպասէին իրենց որոշեալ ժամանակին, որպէս զի Բիւրակնեան լեռնէն լիջնելով կէմիք գիւղն իրենց կրից զօհ առնեն. գեռ ժամանակը չեկած՝ թողին իրենց բնակու-

թիւնը. և ձայն տալով միմեանց՝ անմիջապէս բազմութեամբ եկան Վիշապ քաղաքի անտառախիտ ձորակներու և պարտեզներու մէջ ժողովեցան, 10,000 տունէն աւելի, Հայոց աշխատասէր ժողովուրդն իւր գործով զբաղած էր. դարձեալ խումբ մը Մարք եկին կէմիք գիւղ, իրենց նախկին ֆեաաներու տեղ եռապատիկ առնելու, իրենց ֆնացորդ հարկն ժողովելու, և իրենց դէմ ապրօտամբողները չարաչար դատապարտելով սպաննելու: Աղեկսանդր ուզեց քաղցրութեամբ վարուիլ, և խոստացաւ կատարել իրենց բոլոր ուզածն, միայն թէ թողուն և սպասեն որ ժողովուրդը իւր հունձքն ընէ: Մարք ուղեցին գաղանու թիւն ի գործ դնել. սոյն միջոցին հաղիւ թէ Աղեկսանդր 500 անձինք պատրաստի ունէր. չհանդուրժելով խստիւ ետ ճամբեց եկողները առանց հարկի: Մարք երբ ընդունայն կդառնան, իսկոյն 600ի չափ անձինք ղինու զօրութեամբ

1379

կյարձակին գիւղին վրայ, և կուզեն իսպառ ջնջել: Աղեկսանդր իւր ժողովուրդն կամրացնէ գիւղին մէջ և 500 մարդով կիւնէ Մարաց հետ պատերազմելու: Աղեքսանդր ի վաղուց իւր պատրաստութիւնը տեսած էր յոյժ աղքատութեամբ. ոմանց՝ սուր և սուին, այլոց՝ հրացան, մէկ մասին գերանդի, և կիսոց Դաւթի պէս հովուութեան պարսաքար և ցուպ տուած էր. բայց մեծ է սէրն Աստուծոյ, որով մարդկան պատերազմական զէնքերն առ ոչինչ կհամարուին: Մարք Վիշապ քաղաքի աւերակաց հիւսիսային կողմէն յարձակեցան Հայոց վրայ, նոցա գնտակներ կարկտի պէս կը տեղւային Հայոց գլխուն. բայց Հայեր Աստուծոյ խնամք անդրդուելի մնացին, և տոկալով համբերեցին մինչև սրոյ և գերանդի կռիւն սկսաւ. երբ միմեանց խառնուեցան, Հայոց խոտ հնձող տղայք նոյն տարին փոխան խոտի Մարաց բազմութիւնը հնձեցին, և դի-

ակներ հնձեցին, և դիակներ փռուելով դաշտի մէջ, կարդընկէց ձկանց պէս իրենց արեան մէջ կլողային, և այսպէս սաստիկ հարուածոց չդիմանալով՝ մնացեալքն գէպ ի իրենց մեծ բանակն ի փախուստ դարձան, և Աղեկսանդր անմիջապէս անկելոց զէնքերն իւր մարդոց բաժանեց. և ամռքելով քաջութեամբ կյորդորէր թէ, «դուք ինքնին գիտէք, թէ այն՝ որ ձեզ մահ պատրաստած էր, ինքը խմեց. և այն՝ որ կուզէր ձեր կենաց թերն կտրել, քաջութեամբ դուք անոնց կենաց թերերն կտրեցիք. ձեր նախնիք այսպէս փառաւորուած են. և դուք այսուհետեւ ձեր հարց նման գործեցէք». այս քաջալերական խօսքերով առաւ իւր փոքրիկ բանակն և ի կէմիք ամրացաւ: Մեծ էր Մարաց հարուածն որ Հայոց ձեռքէն ընդունեցին. աղեկէզ տոչորելով յոգւոց կհանէին. կուզէին դարձեալ մեծ բազմութեամբ յարձակիլ կէմիք գիւղի

վրայ . սակայն կասկածանօք Տօնիկէն կը վախճային , թէ կարելի է Հայոց մէջ մեծ միութիւն մը կայ , եթէ ոչ՝ միայն ինքնաբերական չէր զայս առնել . ուստի միութեան խոսքը մ'անձինք Հա-
գարացոց շրջէն որ իբրեւ կրօնական
գան օգնել իրենց , և քանի մը մարդ-
ալ առ Տօնիկ իշխան՝ որ քննելով անոր
սիրտն ու միտքն հասկանան . ըսին Տօ-
նիկ իշխանին , « մեք մեր նախնիքներէն
լսած և տեսած ենք , որ ինքնաբերական
հարկատու եղած է , Մարաց անպարտե-
լի կարաւան մեծ բազմութեամբ ելնե-
լով Տիգրանակերտէն՝ իւր ամառանոց
կը ժամանէր ի Բիւրակնեան լեռն . Տիգ-
րանակերտէն սկսեալ մինչ Բիւրակնեան
լեռն մեր սահման է , մեք բազմու-
թեամբ կերթեակէինք ձեր սահմանաց
մէջէն առանց ումեք վնասելու . միայն
մեր որոշեալ հարկն կ'առնէինք ինքնաբե-
րական . Մարաց մեծ կարաւան ձեր
բարեկամութենէն շատ գոհ է , սակայն

լսած էք և գիտէք թէ , Աղեկսանդր
ի՛նչ չարիք գործեց մեր կարաւանի .
մեք դեռ բարեկամ կը կարծէինք , յար-
ձակեցաւ մերայնոց վրայ և անխնայ
կոտորելով մեծամեծ վնասներ հասոյց .
Մարք Աղեկսանդրի տուած վնասներէն
չեն ցաւիր , այլ զի բոլոր ազգաց առ-
ջ և կորագլուխ եղան . ահա ասոր հա-
մար եկած ենք՝ տեսնենք դուք ի՛նչ
կըսէք , և կամ՝ դուք ևս Աղեկսանդրի
խորհրդակից էք » : Մինչ Տօնիկ մտա-
դիր էր պէտք եղածը պատասխանել ,
իւր որդին՝ Սարգիս որ իւր հօր սննեկի
մէջ ղինավառ . Մարաց կծառայէր , և
իբրեւ հրեշտակ երկնից պաշտպան հան-
դիսացած էր իւր հօր , ծիծաղ ժպիտ
մը արձակեց իւր քաջ յօնից վրայէն .
Մարք խօսեալ դէմքով մը Սարգսին նա-
յեցան . բայց նա՝ որ իւր հօր առջև
ծառայութեան պաշտօն կը կատարէր ,
դեռ չիթք արեան իւր յօնից և ճակա-
տի վրայ կը փայլէր , և յայտնի կընէր
որ ինքը պատերազմի դաշտէն նոր և

կած է. Մարք սկսան միմեանց դուրս
ազդեւել, թէ մեր արեան բիծերն դեռ
վկայ են իւր ճակատի վրայ՝ մեր մար-
դոց սպաննողներէն ըլլալուն, և մէկը՝
չարագոյնը ըսաւ Սարգսին, թէ մեր
խօսքեր ձեզ ծաղրելի կ'ըսեն, և դու-
խըն չարժեքով յոգւոց հանեց. Սարգիս
պատասխանեց, թէ «մեք չենք ծիծա-
ղիր ձեր վրայ. բայց ձեր ըսած խօսքե-
րը ծիծաղելի են, որովհետեւ այժմ
ինքնին Հայոց ու Մարաց յատկութիւն-
ները բացատրեցիք, կըսէք իշխանին
թէ, Մարաց ազգն ուրիշ ազգաց առ-
ջև կորագլուխ եղած է, և կուզէք ի-
մանալ թէ, Աղեկսանդրի խորհրդակից
է, արդարեւ դուք գոռողութեամբ լեց-
ուած էք, և այդ գոռողութիւն ձեր
բոլոր բարեկամներ ձեզ թշնամի ըրած
է. բայց ինչպէս գոռողութիւն ձեր մէ-
ջն է, այնպէս ալ դժբաղդաբար ան-
միութիւն Հայոց մէջն է»։ Մարք կը
յարեն. «կերևի որ դուք Աղեկսանդրի

ընկեր էք. եթէ նա ձեզմէ յոյս չունե-
նար, կարելի չէր որ միայնակ այսպիսի
գործեր գործէր»։ Սարգիս ըսաւ. «ես
իմ հօր սենեկի մէջ ձեզ ծառայութիւն
կընեմ. թէև հօրս ներկայութեան խօ-
սիլ հարկ չէր, սակայն դուք ստիպե-
ցիք, և մեք ալ պատասխանեցինք, և
եթէ ըսածս ուղիղ է, ինչպէս կը զայրա-
նաք»։ — Ձենք զայրանաւ, ըսին Մարք,
սակայն դուք ստիպեցիք. եթէ ձեր չա-
փըն գիտնաք՝ լաւ է. — Սարգիս,
«հօրս սենեկի մէջ մեր սխալմանց
ներեցէք, իսկ երբ դուրս ելնէք՝ քաջ
եղիք, մեր չափն մեզ ճանչցունել
տուէք»։ Տօնիկ սաստեց որդւոյն և դառ-
նալով առ Մարս ըսաւ, թէ ինչպէս
նախ բարեկամ էինք, կրկին այնպէս
ենք, բայց դուք կուզէք մեր բարեկա-
մութեան կապն կտրել, մեզ կըսէք
թէ Աղեկսանդրի ընկեր էք, և վերջին
պատասխան կուզէք, մեք ալ լսած ենք
որ փոքր խռովութիւն մը ձեր և Աղեկ-

ոանդրի մէջ եղած է, իսկ դուք մեծա-
մեծ խնդիրներ կընէք, և կուզէք խոն-
դիրը մեծցունել. եթէ մեզ կը լսէք՝
սոյն խռովութեանց վերջ տալով ձեր
ճանապարհն շարունակեցէք: » Այս մի-
ջոցին, Մարք իրենց ֆրասներ մէջ բե-
րելով, վրէժխնդրութեան հոգւով կե-
ռային, և կուզէին բոլոր Հայաստան
իրենց ոտից ներքև առնել: Տօնիկ բար-
կութեամբ յարեց, հարիւր տարիէ ի
վեր դուք Հայաստանի մէջ կը շարու-
նակէք չեր ֆրասներ. այսօր Աղեկսանդ-
րի գիւղէն քանի մը տղայք ձեր տղայոց
հետ կռուած են, երկու կողմէն ալ
մարդ ֆրասուեր է. բայց դուք բար-
կութեամբ կուզէք բոլոր Հայաստան
ձեր կրից դոհել. Հայաստան ձեր գե-
րին չէ. մինչև իսկ Հագարացի իշխան
կարող չէ ձեր ըսածն ըսել, իբրև Հա-
յաստանի կը խօսիք: — Ի վերջոյ
որչաի Մարք կուզէին սոյն խռովու-
թեան, խնդիրն իբրև մեծ ինչ ներ-
կայացնել, այնչափ աւելի Տօնիկ իշխան

իբրև աննշան կը նշանակէր, և Մարաց
նախկին ֆրասներ յիշելով՝ կզեկուցա-
նէր թէ, Հայք ցարդ ի սէր բարեկա-
մութեան կը համբերէին: Ասոր վրայ
Մարք բարկութեամբ մեկնեցան:

Տօնիկ անսնելով Հագարացւոց և
Մարաց կրօնական միութիւնը, որով
անմիջապէս պիտի յարձակէին Հայոց
վրայ, վութաց պատրաստութիւններ ի
գործ դնել. մարդիկը ժողովեց, և կո-
չելով որդին զրկնց Աշտիշատ գաւառ:
Սարգիս՝ որ պատերազմի դաշտէն նոր
եկած էր, իսկոյն պատրաստուեցաւ.
Տօնիկ ըսաւ, գիտես՝ ժամանակն յղի է
և կերկնէ. անմիջապէս մահ և կեանք
պիտի ծնի: Տօնիկ դեռ անզեկութիւն
չունէր որ Սարգիս պատերազմէն նոր
եկած էր. Աղեկսանդրի և Սարգսի մէջ
միշտ այդ խորհուրդներ եղած էին, և
քաջ նկատած էր Սարգիս, որ Աշտիշա-
տայ լեռներ ու դաշտեր կրկին քաջու-
թեան արեամբ պիտի ներկուին: Սար-
գիս իւր նժոյգ հեծնելով Սլափին գիւ-

ղը փութաց և անտի ի Հայկերտ , Կա-
ալ կատարեալ ծանօթութիւն չունէր
իւր հօր պատրաստութեանց վրայ , Ար-
դարեւ Աշտիշատ գաւառի իշխան Տօնիկն
էր . սակայն Սարգսի քաղցր բնաւորու-
թիւն ժողովրդեան սիրտն ու միտք գը-
րաւած էր . ժողովուրդ ոչխարի նման
նորա ետեւէն կերթար , նա ալ՝ գաղտ
իւր հօրէն՝ պատրաստութիւն տեսած
էր . երբ մտաւ յԱլատին գիւղ , անմի-
ջապէս բոլոր գիւղացիք ընտանեօք հան-
դերձ փութացան Ավրան գիւղն . այս-
պէս Հայկերտ գիւղացիք , և մնացեալ
քանի մը գիւղօրէից բաղմութիւնը ժո-
ղովեցան Ավրան գիւղ : Ալատին գիւղի
համար կըսեն թէ , գից բուն կալուա-
ծըն է , և հին անուամբ գիւղի անունը
մնացեր է Ալատին . իսկ Հայկերտի հա-
մար կը պատմուի , թէ մեծին Մուշեղի
գիւղն է , Պարսից բաղմութիւն այնտեղ
այնչափ կոտորեր է , որոց գիւղացիք
դաշտի հողեր չտանելով՝ արիւն պաղեր
և լերդ լերդ եղեր է , և որպէս թէ

արիւնակերտ անունը փոխուած է Հայ-
կերտ : Սոյն այս գիւղի վերի կողմը
դեռ քարէ արձան մը կայ , զոր կըսեն ,
Լինջան քաջութեան՝ Մուշեղ տնկած է ,
և այնտեղ Պարսից սպարապետի սպան-
ման տեղն է . Հուսկ ուրեմն , բոլոր
Հայք ի զէն վառեալ ժողովեցան յԱվ-
րան , իբրեւ 6352 հոգի . ի բաց առեալ
Աղեկսանդրի 600 ի չափ պատերազմող
մարդիկն , որ Կէմիք գիւղի մէջ էին ,
Իսկ Մարաց բաղմութիւն 10000 տու-
նէն աւելի էր , և դեռ Հագարացի Հա-
սան իշխանի կողմէն օգնութիւն չէր ե-
կած . Մարք մեծ բաղմութեամբ յար-
ձակեցան Կէմիք գիւղի վրայ : Աղեկ-
սանդրի յոյսն յերկինս Աստուած էր , և
յերկրի Տօնիկ իշխան և Սարգիս , Տօնիկ
3 հազարի չափ պատերազմող քաջ ան-
ձինք յանձնեց Սարգսի որ փութայ
յօգնութիւն Աղեկսանդրի . Աղեկսանդր
երբ նկատեց որ Մարաց բաղմութիւն
Վիշապ քաղաքի աւերակաց կողմէն ել-
նելով , հիւսիսային լերանց ստորոտնե-

բու կողմէն զիւղի վրայ պիտի յարձակին, և պատերազմի տեղն իրենց չպիտի օգնէ. իւր վեց հարիւր մարդով զիւղէն ելնելով, յիշեալ զիւղի արեւմտեան կողմն անցաւ, ուր պատերազմի փոքրիկ դաշտ մը կը ձևանար, և որոց մէջ ընցուն ափալիք ողորկեալ կը լորաձև քարինք էին, և այնքան ձիարշաւ դաշտ մը չէր, որչափ որ ոտնադրնաց:

Արդ՝ սոյն դաշտի մէջ հիւսիսային կողմանէ Մարք կը յարձակին Աղեկսանդրի փոքրիկ բանակի վրայ, և Մարգիս արեւելեան կողմէ յօգնութիւն կը հասնի. Աղեկսանդր երբ կնկատէ որ Մարգիս իրեններովն կայծակի արագութեամբ յօգնութիւն կաճապարեն, բայց պատերազմի տեղն իրեն չօգնէր, առնելով իւր մարդիկն՝ փոքր ինչ յետս յետս կը քաշուի. և Մարք տեսնելով որ Աղեկսանդրի մարդեր կը քաշուին՝ սրտապղնդելով կը յարձակին նոցա վրայ. իսկ Մարգիս խրախուս կարգալով՝ արեւել-

եան կողմէն Մարաց վրայ կը խոյանայ, և կըսէ, Հայեր, ահա օր, յորում Մարաց գերութենէն պիտի աղատիք: Այսպիսի յարձակմամբ Մարաց բանակըն Հայոց երկու բանակի մէջ կը կանգնի. երկու կողմէն քաջութեամբ խիզախելով ի մարտ կը խրախուսէին. դաշտի երես արիւնով ներկուած էր. սոյն տագնապալի միջոցին քահանայ մը գրնալով առ Աղեկսանդր՝ օրհնելով կը համոզէ որ սոյն արիւնռուշտ պատերազմէն յետ քաշուի. և ի՛նչ որ Մարք կուզեն՝ տայ. և ջանահնար կը լինի զԱղեկսանդր համոզել. Աղեկսանդր երբ կը տեսնէ որ քահանայի ձեռքէն չազատիր, կըսէ անոր, տէր տէր, թէ քո կարգէն չափնած էի, այժմ՝ զքեզ գետին տապալած էի. զայս ըսելով կարտաքսէ բանակէն, և դառնալով իւր համբայից անունները կուտայ որ իրեւզօրական հաստատած էր բանակի վրայ. Մարտիրոս զարկէ՛ք, Կիրակոս զարկէ՛ք, Թորոս զարկէ՛ք, Շահ Մուրադ զարկէ՛ք.

Թումանյան զարկէք, ձայն արձակեցէք Սարգսին որ զարնէ. շատ չմնաց որ Մարք փախչին և Հայեր յաղթող հանդիսանան. իսկ Սարգիս՝ որ սոյն դէպքէն տեղեկութիւն մը չունէր, քաջութեամբ իւր զօրաց գլուխն անցեր էր և յորդոր տալով իւր մարդոց՝ զՄարք ջարդելով դետին կթափէին. այսպէս քաջութեամբ խորտակելով Մարաց բանակն՝ Աղեկսանդրի բանակին վըրայ լցին. իսկ Հայոց արևմտեան փոքրիկ բանակն՝ որ Աղեկսանդրի մարդիկն էին, քաջութեամբ ոչ յաջ խոտորեցան և ո՛չ ձախ, այլ հաստատ մնալով իրենց տեղ՝ Մարաց ժողովուրդն խոտի պէս կը հնձէին. մարդոց արիւն հեղհեղելով այն փոքրիկ պատերազմի դաշտի մէջ՝ մինչև Կէմլիք գիւղի ձորակի ջուրի հետն խառնուեցաւ, և ներկուելով յիշեալ ձորակի ջուրն մինչև Եփրատ գնաց. այն ժամանակէն ցարդ այն ձորակին (Աւէ գոր) կրսեն Մարաց բարբառով, որ կարմիր և կամ ներկեալ ջուր ըսել

է. Արգ՝ արև նոր Ակրասի դահ անցեր էր, Հայերն իրենց քաջութիւնն ի գլուխ հանեցին. Մարք ի փախուստ առաջարեցին, և ոմանք առ ահի անձնատուր լինելով գութ կը խնդրէին. իսկ մնացեալք ցրուելով լեռներու և ձորակներու խռոջներու մէջ կը ղողէին. Մինչդեռ Հայեր սոյն յաղթութեան վրայ մտադիր էին փոքր ինչ հանգիստ առնելու, Հագարացի Հասան իշխան՝ որ Մշոյ տիրած էր, դաշտի հարաւային կողմէն Հայոց վրայ յարձակեցաւ մեծ բազմութեամբ, սոյն անակնկալ յարձակման վրայ Հայեր փոքր ինչ խռովեցան, սակայն Սարգիս և Աղեկսանդր քաջութեամբ ամրեւելով Հայոց սրտերն, կրկին կռուայ դաշտի մէջն իջան և բոլորեցան վառեցան միմեանց դէմ, յարձակեցան միմեանց վրայ իբրև վաղեմի թշնամի. Հասան իշխանի բազմութիւնը՝ որ 6000ի մօտ էր, փախուցեալ Մարքն ալ կրկին դալով, 10000ի չափ եղաւ. իսկ Հայոց մարդիկն՝ որ

3500ի կը հասնէր, ոյն մեծ բաղմուն-
թեանէն չղանդիտելով ուրախ սրտիւ ի
պատերազմ մտան. պատերազմական
բոլոր գործիքներու ձայնք լռեցին, և
յանդուզն յարձակմամբ միմեանց վը-
րայ դիմեցին. ամեն ուրեք լռութիւն
տիրած էր. միայն սրերու ձայնը ար-
եանց մէջ կը ջղիւար. արիւն դաշտի մէջ
հեղեղի պէս գետացեր էր, դիակներ
արեան մէջ դաշտի երեսի վրայ կարդըն-
կէց ձկանց պէս կը կայտուէին, և յայտ-
նի չէր թէ երկու կողման ո՛րն է դօրա-
ւորն. մինչ երեկոյ էր, և փոքր ինչ
Հայք յաղթութիւն գտնալու վրայ էին,
և մօտ էր որ բաժանման փողն հնչէր,
Աղեկսանդը իւր երկու ընկերներով քա-
ջութեամբ ընդունեցին մարտիրոսու-
թեան փառաց պսակն. և նոյն միջոցին
բաժանեցան ի միմեանց, քանի որ յաղ-
թութիւն յայտնի չէր. իւրաքանչիւր ոք
իւր բանակով պատրաստ կսպասէին ա-
ռաւօտեան. Հասան Մարաց բանակը
հարաւային կողմն բանակեցոյց. և Հայք

Ժողովեցան մերձ Կէմկայ հիւսիսային
կողմն. նոյն երեկոյին երկու կողմէն
ալ ոչ ոք սպանելոց դաշտին չմտե-
ցաւ. երեկոյ էր՝ Հայոց լուսին իւր
ծայրը ծարսնոյ աւերակաց լեռներու ե-
տեւէն դուրս տուաւ, Հայոց նահա-
տակներ խառն ընդ թշնամիս դաշտի
մէջ արկւնով ներկուած էին. Աղեկսան-
սանդը՝ իւր երկու ընկերներով բաղմու-
թեան հետ խառնուած՝ անյայտ մնա-
ցեր էր. Սարգիս տրամութեամբ լեց-
ուած էր, չէր հոգար առաւօտեան պա-
տերազմն. այլ և կհոգար և կցաւէր
Աղեկսանդի կորստեան վրայ. անմի-
ջապէս Ավրան մարդ զրկեց առ Տօնիկ
իշխան, և այն տեղէն պահեօտի մար-
դիկներէն 2000 ի չափ օգնութիւն հա-
տուց, և վիրաւորք զրկուեցան յԱվրան
Մինչ Սարգիս սոյն պատրաստութեան
հետ էր, առաւօտեան բարի լոյսն գըմ-
բէթած և բարձրացաւ երկնից մէջ տեղ,
իսկ Հագարացի իշխան երբ Հայոց փոք-
րիկ բանակի քաջութիւնը կնկատէ, որ

քիչ մարդով մեծամեծ գործեր գործեցին, և կարծիք առնելով որ անմիջապէս իրենց ուշիչ օգնութիւն պիտի հասնի, սոյն մտադրութեամբ առնելով իւր մարդիկն՝ կիտախի գէպ ի Մուշ, և մերձ Հայկերտ գիւղն բանակելով, Մըշոյ կողմէն ուրիշ օգնութեան կսպասէ. Սարգիս՝ որ կատարեալ լուսնալու կըսուածէր, Արեգի պայծառ լոյսն արձակուած ասեւն երբ տեսաւ որ Հազարացւոց բանակն իւր տեղն չէ, շուտով ամեն ուրեք մարդ զրկեց լրտեսելու և խումբ մը քաջ անձինք բանակեցոյց Հազարացւոց բանակի տեղն. նոյն տեղն ցայսօր Ամենայն Փրկիչ կանուանի, վասն զի այն օր փրկութեան օր մը եղած է՝ տեղւոյն ժողովրդեան համար, և սովորութիւն կայ, որ երբեմն Հայք կերթան այն տեղ ուրախութեան զոհ կմատուցանեն: Երբ Սարգիս կատարեալ ծանօթութիւն կառնու թէ Մարք և Հազարացիք փախուստ տուած են, բազմութեամբ նահատակելոյց դաշտն

կիջնէ և Հայոց քաջ նահատակները հաւաքելով՝ Կէմիք գիւղի դերեզմանատան մէջ կամփոփէ. իսկ Աղեկսանգըի և նորա երկու ընկերաց պատուական մարմիններ բերելով Կէմիք գիւղի Ս. Յարութիւն եկեղեցւոյ տաճարի ներքև կը դնէ: Հայ նահատակաց թիւն յայտնի չէ ճշդիւ. ոմանք կըսեն 590 և այլք աւելի կամ պակաս. իսկ Մարաց և Հազարացւոց սպանելոց թիւն՝ ըստ ոմանց 2500 և ըստ այլոց 3000, որոց մարմիններն ալ Սարգիս կը վերցունէ՝ յատկապէս մեծամեծ հորեր փորել տալով և նոցա մէջ լեցունելով և քարակարկառ բարձրացնելով իբրև նշան կը թողու, որ ցարդ կեցած է: Սարգիս քաջութեամբ սոյն գործեր տեսնելէն զկնի, Կէմիք գիւղի բնակիչքն առնելով յԱվրան գիւղ կամրանայ: Արդ՝ երբ Հազարացի իշխան լուր կառնու թէ Սարգիս Ավրանի մէջ ամրացեր է բաւական բազմութեամբ, կուգէ պաշարել զայն, սակայն չկրնար իւր չար նպատակին

հասնիլ . այլ միայն զլէմիք՝ որ ամացի
 ֆնացեր էր , հրոյ ճարակ կուտայ՝
 խումբ մը Հաղարացի և Մարք զրկե-
 լով : Մինչդեռ Հասան իշխան սոյն վը-
 նասներ տալով՝ ի Հայկերտ նստած օգ-
 նութեան կսպասէր Տիգրանակերտի կող-
 մէն , որպէս զի իւր նպատակն յառաջ
 տանի , Սարգիս՝ դադտ Տօնիկ իշխանէն՝
 առնելով գիշեր ատեն փոքրիկ խումբ
 մը իւր մարդոցմէ , Հայկերտ գիւղի
 սահմանի մէջ կը յարձակի Հաղարացու
 և Մարաց բազմութեան վրայ . մեծ աղ-
 մուկ և խռովութիւն անկանելով անոնց
 մէջ՝ ընկեր գընկեր սպանանել կսկսի .
 իսկ Սարգիս առնելով քանի մը քաջ ան-
 ձինք իւր հետ , բանակին մէջէն շանթի
 պէս սրալով Հաղարացի իշխանին կը
 հասնի , և սուր վերցունելով երբ զնա
 յերկուս պիտի ճեղքէր , ի թիկանց մահ-
 ուան վէրք կընդունի , և դառնալով ի-
 րեն զարնողին կեանքը կը բառնայ . այս
 պահուն հասնելով իւր քանի մը ընկեր-
 ներ և վտանգի մէջ տեսնելով զինքը՝

կառնուն բանակէն դուրս , Սլրան գիւղ
 կը բերեն արիւնաթաթաւ :

Հայոց ասպատակն թէև Մարաց և
 Հաղարացուց մեծամեծ ֆրասներ տուին
 և կիսով չափ բանակն ցրուեցին . բայց
 ի՛նչ օգուտ , քանի որ իրենց պարագը-
 լուի Սարգիս մահուան վէրք ընդունած
 էր : Սարգիս իւր գիւղ գալէն զինի քա-
 նի մը ժամ կենդանի մնաց և յետոյ
 փառաւորապէս ընդունեց մարտիրոսու-
 թեան արիւնով պսակն , ի փառս հայ-
 րենեաց : Տօնիկի սրտի մէջ երկու հա-
 կառակ զգացում՝ կը գիմադրէր : Ու-
 բախ էր՝ իւր որդւոյ քաջագործութեան
 և հայրենասիրութեան վրայ . իսկ ցա-
 ւօք լեցուն էր որ իւր մանկական հա-
 սակի մէջ նահատակ անկանելով՝ ժա-
 ոանգ մը չունէր : Տօնիկ իւր որդւոյ
 յուղարկաւորութեան հանդէսն ըստ հին
 հայկական դրութեան կատարեց . նը-
 ժոյգ մանին զարդարուած և բոլոր
 պատերազմական զէնքերն կապուած իւր
 նժոյգի վրայ , տարաւ իր նախնեաց գե-

բերեցանուտան մէջ ամբիփեց զնա: Սարգսի
գերեզմանի վրայ ցարդ տապանաբար
չկայ. փոքրիկ լուսամուտ մը, ժողո-
ված են իւր տապանի վրայ փոքր
քարինք, և ցարդ սովորութիւն կայ որ
նոյն գիւղացիք և իւր ազգականք ա-
մեն շաբաթ իւղով և խնկով ուխտ կեր-
թան նոյն գերեզմանի վրայ: Սարգսի
գերեզմանէն քանի մը ոտնաքայլ հեռի
դէպ ի արեւմուտք վիշապած և քարէ մեծ
արձան մը կայ, որ կիսով չափ ի հող
թաղուած է: Տօնիկի տխրութիւն և
սուգ կը առէ մինչև որդւոյն թաղման
ժամը. այնուհետև կանգնելով նորա
գերեզմանի վրայ, կըսէ, «որդեա՛կ իմ»,
դու գնացիր, և անկարելի է որ կրկին
դքեղ յետ բերեմ, վաղ կամ ես քեզ
սլիաի հասնիմ, և կամ ձեր վրէժն սլի-
տի լուծուի», և դառնալով առ բազ-
մութիւնն կըսէ, «գիտեմ որ դուք եր-
կինք բնակութիւն մը ունիք, նախախը-
նամութիւն ձեզ քաջութեան ասպարէզ
մը պատրաստած է, չառ մը նահատակ-

ներ ունեցանք սոյն քանի մը օրերուս
մէջ, և որոց ընկերն ալ նոր ճանապար-
հորդեց, պատրաստ կեցիք, վաղ
կամ իսպառ որէ անցնինք, և կամ
Մարաց ձեռքէն ազատինք»: Տօնիկ ան-
միջապէս իւր բնակութիւնը կիջնէ, և
բոլոր ազգականները կը ժողովէ, որոց
թիւը 87 հոգիի կը հասնի, իւր եղբօր-
որդի Սմբատն անոնց գլուխ կը կա-
ցուցանէ և 400 էն աւելի քաջ պատե-
րազմող անձինք պատրաստելէն յետոյ՝
հազարացի իշխանին լուր կղրկէ թէ,
անմիջապէս առաւօտ պատերազմէ, և
չըսէք թէ դաղտնի յարձակում ըրին:
Հասան իշխան լսածին պէս՝ իւր բանա-
կըն առնելով Ալատին ըստած գիւղի
սահմանի մէջ կպատրաստուի. դեռ ա-
ռաւօտ չեղած՝ Տօնիկ իւր մարդիկն առ-
նելով հազարացւոց և մարաց վրայ կը
յարձակի, դաշտալայր ձորակի մը մէջ.
պատերազմ սաստիկ կլինի, Հայկ ձորի
նեղ կիրճն կտրելով մարաց վրայ՝ բա-
ւական մարք կսպանուին. և աստանօր

Տօնիկ կձայնէ իւր եղբօրորդի Ումրշատին թէ բնաւ չխնայէք, սրովհետեւ Մարգիս ի տապանէ վրէժ կաղաղակէ : Այն տեղէն ելած ջուրերուն Ումրշատայ աղբիւրներ կըսեն, և այն տեղ որ Հագարայցոյ և Մարայ բանակն է, Հասան պէյի աղբիւր կըսեն. ո՛վ որ ձեռքերնին կ'անցնի՝ շուտով իւր բաժակն կ'իմէ. և այսպէս փախցունելով մինչեւ Եփրատ գետ կ'վարեն. Տօնիկ իշխան կըսէ, մեր թշնամին դատապարտուեցաւ. և առնելով զՀայոց քաջերն կրկին Ալրան գիւղի մէջ կ'ամրանայ, իսկ այնտեղ որ Տօնիկ իշխան ըսած է թէ մեր թշնամին դատուեցաւ, դեռ նոյն տեղւոյն անուընդ դատաւորաց արաւեր է : Այսպէս ժողովուրդը վտրք ինչ հանդիստ կառնու : Հասան իշխան երբ կը տեսնէ որ բոլորովին պիտի նուաճուին ի Հայոց, փութաց դեսպաններ ղրկել 'ի Տիգրանապոլիս, և կուղէ այն կողմի բոլոր Մարք և Հագարայցիք ժողովելով 'ի Տարօն բերել, որպէս զի խուռն բազմութեամբ

Հայոց վրայ յարձակին : Իսկ Տօնիկ իշխան երբ նկատեց որ սոյն դրութեամբ կրկին Հայոց ապագայն թշուառ է, Ումրշատին յանձնեց ամեն բան և պատուէր տալով որ խոհեմութեամբ 'ի գործ դնէ զարժանն, ինքը ելաւ գնաց յԱպահունիս առ Շէյխն, որ յառաջագոյն քրիստոնեայ էր : Շէյխն զՏօնիկ իշխան սիրով և յարգանք կընդունի. որովհետեւ այն ժամանակ՝ որ Հայոց երկիրներ Պարսից ձեռք մատնուեր են և Հայաստան Յունաց հետ փոխարինուեր է, սոյն Շէյխի նախնիք Յունաստանէն դալով յԱպահունիս՝ Ապրի անունով գիւղն բնակեր են, և երբ իրենց աղքատութիւնը է դարձեալ Մարայ և կամ Արաբացոց բռնութենէն՝ իրենց կրօնքն փոխեր են և ցարդ իրենց ճակատաւորութիւնն հին դրութեամբ կանգուն կեցած է, և շատ հեղ բրբելով քրիստոնէից խաչի նշաններ կ'ենեն, և որոց ազօթատեղին դեռ Հայաստանի վանօրէից ձեռով չխնուած է : Սոյն Շէյխ երբ Տօ-

Տօնիկ կձայնէ իւր եղբորորդի Ումրչատին թէ բնաւ չլինայէք, որովհետեւ Սարգիս ի տապանէ վրէժ կաղաղակէ և Այն տեղէն ելած ջուրերուն Ումրչատայ աղբիւրներ կըսեն, և այն տեղ որ Հագարացցոյ և Մարաց բանակն է, Հասան պէյի աղբիւր կըսեն. ո՛վ որ ձեռքերնին կ'անցնի՝ շուտով իւր բաժակն կ'սմէ. և այսպէս փախցունելով մինչեւ Եփրատ դետ կ'վարեն. Տօնիկ իշխան կըսէ, մեր թշնամին դատապարտուեցաւ. և առնելով զՀայոց քաջերն կրկին Ալրան գիւղի մէջ կ'ամրանայ, իսկ այնտեղ որ Տօնիկ իշխան ըսած է թէ մեր թշնամին դատուեցաւ, դեռ նոյն տեղւոյն անուներ դատաւորաց արարէր է, Այսպէս ժողովուրդը փոքր ինչ հանդիսաւ կառնու.

Հասան իշխան երբ կը տեսնէ որ բոլորովին պիտի նուաճուին ի Հայոց, փուլթաց դեսպաններ ղրկել ՚ի Տիգրանակերտ, և կուղէ այն կողմի բոլոր Մարք և Հագարացիք ժողովելով ՚ի Տարօն բերել, որպէս զի խուռն բազմութեամբ

Հայոց վրայ յարձակին. իսկ Տօնիկ իշխան երբ նկատեց որ սոյն գրութեամբ կրկին Հայոց ապագայն թշուառ է, Ումրչատին յանձնեց ամեն բան և պատուէր տալով որ խոհեմութեամբ ՚ի գործ դնէ զարժանն, ինքը ելաւ գնաց յԱպահունիս առ Շէյխն, որ յառաջագոյն քրիստոնեայ էր. Շէյխն զՏօնիկ իշխան սիրով և յարգանք կընդունի. որովհետեւ այն ժամանակ՝ որ Հայոց երկիրներ Պարսկց ձեռք մատնուեր են և Հայաստան Յունաց հետ փոխարինուեր է, սոյն Շէյխի նախնիք Յունաստանէն դալով յԱպահունիս՝ Ապրի անունով գիւղն բնակեր են, և երբ իրենց աղքէն նուաճեր է դարձեալ Մարաց և կամ Արաբացոց բռնութենէն՝ իրենց կրօնքն փոխեր են և ցարդ իրենց օգնութեամբ ուխտատեղին հին գրութեամբ կանգուն կեցած է, և շատ հեղ բրելով քրիստոնէից խաչի նշաններ կեղնեն, և որոց աղօթատեղին դեռ Հայաստանի վանօրէից ձեռով շինուած է. Սոյն Շէյխ երբ Տօ-

նիկէն ծանօթութիւն կառնու այս նոր
անցից վրայ, մարդ կը դրկէ Մըմանք
ըսուած անունով երեւելի քուրա իշխանի
մը, որոյ համար կըսեն թէ Մամիկոնեանց
տոհմէն է, և ցարդ իրենց ալ Մմըքցի
ցեղ կըսուի, և շատ անգամ իրենք կը-
սեն թէ, մեք յառաջագոյն Հայ եղած
եմք, ու Մամիկոնեանց ըսուած տունը՝
որ դուք կըսէք, մեր տունն է, Արդա-
րեւ անոնց կը վայելէ Մամիկոնէից ա-
նուն, վասն զի իրենք հաղիւ թէ Ծ-6 հար-
իւր տնէ բաղկացեալ խումբ մ'են, բայց
30-40 հազարի չափ Մարաց հակառակ
են, ամեն տարի բոլոր Մարաց մեծա-
մեծ ֆեաաներ կուտան, և ամենքն ալ
անոնցմէ կը սասանին, Արդ՝ Շէյխն առ-
նըլով Մըմանի աղան, ուղղակի Հագա-
րացի Հասան պէյին կերթան և կըսեն.
«Արդարեւ մեք կըօնիւք ձեր հետ միա-
ցած եմք, սակայն գիտցած եղիք որ
մեր սերմն ուրիշ ազգի է, դուք Տիգ-
րանակերտի խուժ և դուժ Բուրսերն
լեցուցիք մեր երկրի մէջ, և Պարսից

հին չարիքներէն պակաս չարիք չգործե-
ցին մեր հայրենի աշխարհի մէջ, մեք
միացանք ձեր հետ, որ դուք մեր հայ-
րենի աշխարհին պաշտպան հանդիսա-
նայք. դուք փոխանակ պաշտպանու-
թեան, Պարսից և Արաբացուց պէս մեր
երկիրն արիւնով լցիք. եթէ սոյն խռո-
վութեան վերջ չտայք՝ պատրաստուե-
ցէք»։ Չայս ըսելով Հայոց աղմկալից
կացութիւնը կ'ներկայացնեն, և կըս-
պառնան որ եթէ իրենք Մարաց հետ մի-
անան, անպատճառ Շէյխն և Մըմանի
աղան ալ Տօնիկի հետ պիտի միանան,
Հագարացի Հասան պէյն կ'նկատէ որ
այսպէս աւելի պիտի փասուի, ուստի
խաղաղութիւն կ'խոստանայ, բայց պէտք
է կըսէ, Տօնիկ Ավրան գիւղէն ելնէ,
ի Կէմիք նոր բնակութիւն չ'յինուի, և
ինչ փաստ՝ որ մեք կրած ենք, անտու-
ժելի մնայ, Այսպէս հաստատուելով՝
նախ Տիգրանակերտի կողմի Մարք կը
ցրուին և իւրաքանչիւր ոք իւր փասուցն
է պատասխանատու, Շէյխ աւերակ մը

Տօնիկին կ'նուիրէ իւր սահմանի մէջ, և Տօնիկ իւր տան կէսը կտանի Յակոն ըստ լուծ տեղն զոր Շէյխ տուած էր, և գիւղի անունը կ'դնեն Յատկոն, Այսպէս յերկուս կ'բաժնուի այն նահապետական բնակութիւնը, և ցարդ իրենց ազգականութիւնը պահելով խնամութիւն չեն ընել միմեանց հետ: Ահա սոյն պատերազմի կատարածն այս եղած է, և ցարդ Հայաստանի մէջ աւանդութեամբ կ'պատմուի:

Հետամուտ լինելով սոյն աւանդական պատմութեանց՝ որ ցարդ անմոռաց մընացած է ժողովրդեան մէջ, դիտմամբ քանի մը ընկերներով դնացիներ այդ պատերազմի տեղեր, այնքան լայն և ընդարձակ դաշտ մը չէ, ձիավար մը կարող է մէկ ու կէս ժամէն դորա շրջապատն պտըտիլ, չորս կողմն լեռներով և բլուրներով պատած է. Կէմէք գիւղի արեւմտեան կողմ ձորակ մը կայ, որոյ հարաւային լեռներու ջուրերն հոն կը ժողովին և անտի Եփրատ կհասնին. դաշ-

տին մէջ հազարաւոր քարակոյտեր կան, որոց համար կըսեն թէ պատերազմի դաշտերն են: Դեռ Հայաստանի մէջ կայ այն հին սովորութիւն, ուր եթէ մարդ մը սպանուի՝ անդ քարէ կարկառ կչիւնեն: Դաշտը այնպէս խոտաւետ և ծաղկաւետ է, որ մարդ կարող չէ մէջը շրջիլ խոտոց թանձրութենէն, իսկ Կէմիք գիւղն՝ որ ցարդ իբրեւ աւերակ է, տասն տուն վայրենի և դաղան քուրա կը բնակի. կ'կարծես թէ, նահապետութեան և հողագործութեան մասին երկրորդ դրախտ մ'է, աւերակաց դիրքն կ'այսոնէ, որ մեծ դիւղ մ'է եղեր: Անցանք ձորակի մը մէջէն ուր փոքրիկ քարուկիր եկեղեցի մը կար, սուրբ Յարութիւն անունով. եկեղեցւոյն արեւելեան ուղիղ տաճարի ներքեւ մեծ անտաշ որձաքար մը կար, որոյ վրայ բոլորածեւ տասն մարդ կ'նստէր, ցոյց տուին մեզ թէ Աղեկսանդրի և իւր 2 ընկերաց գերեզման է. բուն իսկ եկեղեցւոյ տաճարի հիմանց ներքեւէն քանի մը աղբե-

րակունք կբղխին , և քանի մը ոտնաքայլ
դէպի արեւելք գնալով փոքրիկ առուա-
կի մը հետ կխառնուին , և կրկին եկե-
ղեցւոյ վարի կողմէն ելնելով , և գալով
եկեղեցւոյ առջեւէն կանցնին ու հէմիք
գիւղ կերթան : Եկեղեցւոյ չորս կողմ
դեռ պարիսպն կեցած էր , և հարաւա-
յին կողմի աւանդատունը նոր շինուածի
պէս էր , աւազանը խորտակած էին ,
սակայն դեռ օձաձեւ քարինք կ'կրէին
իւր կողմերն : Աստի ելնելով փոքրիկ
բլրակէ մը վեր ելանք . եկեղեցիէն դէպի
արեւմուտք լերան կողմ փոքրիկ հովիտ
մը տեսինք , և քանի մը շեղոթ տուն-
կեր , որոց ներքեւ բաւական քարադէզք
կային , և ոմանց լուսամտից տեղերն
դեռ յայտնի կերեւէին : մեզ ընկերացող
անձանց տեղւոյն անունը հարցուցինք՝
Ս. Թեղեւիդ ըսին , և քարադէզներու
համար ըսին թէ նահատակաց տեղեր և
գերեզմանատունք են : Անտի անցանք
փրկութեան տեղն , յորմէ Հազարացիք
և Մարք փախեր են . ուրիշ բան մը չը

տեսինք , միայն ջրաւէա և խոտաւէտ
տիղմեր :

20 տարի յառաջ Մշոյ կառավարու-
թիւն կուղէր՝ հէմիք գիւղի աւերակներ
իւր բոլոր սահմաններով Մշոյ Ս. Կարա-
պետու վանուց վաճառել 9 հազար դրու-
շի : Այն ժամանակի Միաբանութիւնը
չգնեց . ապա Քուրտ մը առաւ 9 հազար
դրուշի : Սոյն գիւղի սահման՝ 500 տուն
Հայ ժողովրդոց կ'բաւէ հողագործու-
թեան . ցարդ անոր ձեռքն է , 10 տուն
Քուրտ մէջը կ'բնակի , և ամեն գրկանք
կրնեն Հայոց :

Անցաւ ժամանակ մը , յորում լու-
թիւն տիրած էր , և հասարակութիւնը
փոքր ինչ խաղաղ էր , թէև պատերազ-
մի աղմուկներ դադարած էին Տարօնոյ
և Աշախատ դաւառներէն , սակայն Հա-
զարացւոց սրտի մէջ պահուած էր ա-
տելութիւն . կուզէին փոթորիկ մը բե-
րել Հայոց գլխուն , բայց յայտնի կարօղ
չէին . Հայոց ամենայն իրաւունք կ'բռ-
նաբարութիւն Հազարացւոց ձեռօք , Օս-

մանեան կառավարութիւն դեռ կառար-
եալ ներդործութիւն չունէր այն խոր
խորշերու մէջ . և անկախ էին . իւրա-
քանչիւր ոք ինքնագլուխ իշխան էր .
այսպէս քրիստոնեայ ժողովուրդն ամեն
կերպով բռնաբարութեան ենթարկուե-
ցաւ . գերութեան լուծն օր ըստ օրէ
ծանրացաւ . Հազարացիք այնպիսի ըն-
թացք մը բռնեցին որ Հայոց իրաւունքն
դարձեալ Մարաց նիդակի ծայրն էր .
երկիրն անտէր հօտ մը դարձած էր ,
հասնողն կ'կեղէքէր . եթէ Հազարացի
կառավարիչներուն երթային , փոխանակ
օգնութիւն գտնելու՝ մեծ դատապար-
տութեան կ'ենթարկուէին . Մարք՝ ի
չնորհս Հազարացի իշխանաց , երբէք ի-
րենց ասլուստի համար խորհելիք չու-
նէին , որովհետեւ Հայոց ժողովուրդն
ի՛նչ որ աշխատութեամբ ձեռք կբերէր ,
բռնութեամբ կ'յափշտակէին ձեռքէն .
այնպէս տարրացաւ այս գերութիւն
Հայոց մէջ , որ անխոնջ աշխատութեամբ
կգործէին , Հազարացւոց և Մարաց

բոլոր պէտքերն ձրի հոգալու համար .
եթէ մէկը սխալմամբ այսպէս չվարուէր՝
ընտանիքով դատապարտուած էր և ոչ
ոք պաշտպան մը չունէր . Մարք ամառ-
ներն լեռներ ելնելով վրանաբնակ կ'լի-
նէին , և ձմեռան մօտ կուգային Հայոց
գիւղէր կ'բնակէին . Հայոց բոլոր ինչքեր
կ'յափշտակէին , իրենց բոլոր գրաստներ
ձրի Հայոց պահել կուտային , և եթէ
իրենց մէկը սատակելու լինէր , որում
որ յանձնուած էր՝ միոյն տեղ երկուք
պիտի աուժէր . երբ դարուն գար , իւ-
րաքանչիւր ոք իւր տուն բնակող Քուր-
տի համար ուտելեաց պէտքերն պիտի
հոգար , քանի մը բեռ ցորեան ալիւր
ընելով , ձաւար ևն , բառնալով իւր գը-
րաստներու վրայ , և ուր որ իւր աղայի
սիրտն կ'ուզէր՝ այն լեռան գլուխն կը
տանէր , և այն տեղ անոնց վրանները
բռնել , և նոր հրաման առնել որ դար
իւր գերութեան տնակն , և փարաւո-
նական անխոնջ տառապանօք աշխատէր
Հայոց օրեր այսպիսի գերութեամբ

կանցնէին , և Հագարացիք ու Մարք
իբրեւ գերի կողործածէին զՀայոց ժողո-
վուրդ : Լուր ելաւ ամեն ուրեք , թէ
Ռուսաց և Տաճկաց պետութեանց մէջ
պատերազմ կայ , և երբ պատերազմի
լուրն ստուգուեցաւ , Հագարացիք և
Մարք՝ իբրեւ տէր Տարօնոյ՝ իրենց երկ-
րին պաշտպան հանդիսացան , խումբ
կազմելով յօգնութիւն Տաճկաց փոլթա-
ցին : Երբ երկու պետութեանց բանակ-
ներն պատերազմի դաշտի մէջ միմեանց
կղարնուին , Հագարացիք և Մարք խմբ-
բովին ի բացուստ կ'դիտեն , և ի մէջ
գիշերի խմբովին կ'յարձակին պատերազ-
մի դաշտի մէջ , անկեւոյց ինչքերն կ'կո-
ղոպտեն , և շուտով մուտ կ'դործեն Տա-
րօնոյ և Աշտիշատ գաւառաց մէջ : Խոր-
հուրդ կընեն անդանօր թէ , ահա Ռուս
պիտի դայ՝ մեր աշխարհին տիրէ , և
սոյն կողմեր մեզ բնակութեան տեղի
չպիտի մնայ . ուրեմն այս երկիրն աւե-
րելով երթանք . ամեն ուրեք յայտնի
հրաման եղած էր իրենց ստորագրեալ-

ներուն . Տիղրանակերտի կողմերէն Մարք
թուշոց երամի պէս լցուեցան Տարօնոյ
և Աշտիշատ գաւառներու մէջ , և այս-
պէս յարձակեցան խեղճ Հայ ժողովրդ-
ոց վրայ , ոչ գիւղ թողուցին Հայոց և
ոչ ալ վանօրայր , այնպէս որ շատ ան-
գամ ընկեր զընկեր կ'սպաննէր Հայոց
ապրանքներու համար , և միմեանց ձեռ-
քէն կ'յափշտակէին . Սոյն միջոցին խումբ
մը Մարաց գլխաւորք կ'յարձակին Մշոյ
Ս. Կարապետու վանուց վրայ , և անխը-
նայ կողոպտելով , վանքն տաին ու վրայ
կընեն , բոլոր միաբանութիւն մերկ կը
ցրուին անառաճներու մէջ կ'փախչին .
տեղ չմնար որ բրեւելով չքակեն . մինչեւ
անգամ սուրբ գերեզմանն ալ քակելով
վրայի կափարիչը խորտակած էին . շատ
մը ծածկեալ գանձեր դտած էին , որոց
վանահարք և լուսարարքն ալ տեղեկու-
թիւն չունէին . հին և նոր բոլոր գըր-
ուածները ժողովելով մեծամեծ սղինձ-
ներու մէջ կ'լեցնեն , թանուլ և ջուրով
խաշելով բոլորն ալ կ'ոչընչացնեն , Դեռ

սոյն անցքեր վանուց գլխէն չանցած , ներքին բարեկամներ Մարաց կողմէն լուր կուտան ժամանակին վանահօր կամ առաջնորդին , որ կուրացի Պետրոս եպիսկոպոսն է , բայց նա անհոգութեամբ ունկնդիր չլինիր . մինչև Մարաց բաղմութիւն կյարձակի վանուց վրայ , և առաջին անգամ կողոպտելու փորձ մը կընեն . Պետրոս եպիսկոպոս երբ կնըկապէ զայս՝ միջոց կ'գտնէ 'ի Մուշ փախուելու և միայն զինքը ճողոպրելու , պատճառելով թէ կերթամ շուտով ձեզ օգնութիւն դրկել Մուշէն . երբ առաջնորդ վանքէն կեղնէ , վանքն այսպէս կը կողոպտուի , և ինքն ալ Մուշ չհասած՝ Մշոյ ներքեւ ջրիք գիւղի քով կ'կողոպտուի : 1877ին ալ , երբ դարձեալ նոյն անցքեր վանուց գլխէն պիտի անցնէին , վանահայրն՝ որ բնիկ Մշեցի էր , թողուց զվանք և զմիաբանութիւն և փախաւ 'ի Մուշ . բայց միաբանութիւն 'ի մահ աշխատելով զվանք Մարաց և Տմլեաց ձեռքէն ազատեց . առկայն կարող չեղեւ

վանուց կալուածները պահելու . միայն վանուց ներքին աղարակը կողոպտեցին , որ ներքին փակահ կըսուի . և այսպէս թէ ոչխար թէ դուար և թէ ձիոց կալուան , բոլորն ալ աւարեցին :

Գալով Տարոնոյ և Աշտիշատ դաւառներու խեղճ ժողովրդեան , շատ անտանելի ցաւեր կրեցին իրենց հայրենի աշխարհի մէջ . սոյն դաւառներու հողեր բոլորովին արիւնով չաղուեցան . Մշոյ լայն և ընդարձակ դաշտը լցուած էր արիւնով և մարդկային դիակներով . Մարք ամեն կերպով զինուորեալ՝ անգէն հայոց վրայ կ'վազէին , ամենեցուն պարանոցի վրայ սուր կշողար . թողլով իրենց որդիքն ու կանայք՝ լեռներ կը փախչէին , այլք մնալով իրենց տան մէջ Մարաց որի բերնէն կանցնէին , իսկ Տիգրանակերտի Մարք , կրկին բանակ կազմելով՝ Աշտիշատայ դաւառի վերայ յարձակեցան . մինչ ժողովուրդ այլ և այլ ցաւոց ներքեւ կտառապէր , և իրրեւ խուժք մը անմեղ դառնէր անդէն շուա-

րած էին . Մարք յարձակեցան Ալլրան
և այլ դիւղօրէից վրայ . նկատեց ժողո-
վուրդն , որ իրենց յոյս մը չէ մնացած ,
և այդ անբաւ բազմութեան առանց զէն-
քի չեն կրնար դիմադրել , վասն զի նախ
զէնքերն կողոպտած էին , Աշտիշատայ
կողմի բոլոր ժողովուրդն ժողովելով ,
պարսպապատ փոքրիկ վանքի մը մէջ
մակաղեցան , որոյ անունը Մատնալանք
էր . Մարաց բազմութիւն՝ որ Տիգրանա-
կերտի կողմէն իրրեւ գյորձանս հեղե-
ղաց յԱշտիշատ կցուէր , այդ վանքը
պաշարեցին , և զինու զօրութեամբ փոր-
ձեր կընէին . երբ հաստատեցին թէ
Հայոց մէջ հրացանաձիգ չկայ , յարձա-
կելով վանուց դուռն խորտակեցին , և
պարսպի մէկ կողմն պատառելով ներս
մտին բազմութեմբ . երբ Հայեր տեսին
որ ամէն կերպով մահ զիրենք պաշա-
րած է , խորհեցան քաջութեամբ մեռ-
նիլ . բայց չունէին զէնք որ թշնամոյն
դէմ դորձածեն , Հագարացիք և Մարք
միայն գերանդի թողուցած էին Հայոց

ձեռք , որով խոտ կհնձէին . Մարք և
Հայք միմեանց կխառնուին . Հայք որ-
չափ որ զէնք չունէին , բայց իրենց վեր-
ջին յարձակումն շատ զովելի էր , գե-
րանդիւ յարձակեցան թշնամոյն վրայ ,
երկու կողմէն ալ ափսոսման մարդկանց
դիակն կցուի , որ անկելոց մէջ անց ու
դարձ չլինիր . Մարաց շատերն անձնա-
տուր կլինին , վանուց պարսպէն դուրս
դիմեանս կոտորելով դիակներն քարա-
կուտակաց պէս դէղ դէղ կլինին և
վանքին բակը սպանեալ դիակներով կը
լցուի . սոյն կոտորածն միմեանց տալէն
զկնի Մարաց վառողն կհասնի , սակայն
Հայք չդիտէին վառողին հատած ըլլալը .
Մարք խոյս տալով վանուց վրայէն կը
մեկնին , որպէս զի յետոյ մեծ պաշարա-
տութեամբ կրկին յարձակին . Հայեր
երբ կը տեսնեն Մարաց քաջուիլը , այ-
նուհետեւ իւրաքանչիւր ոք իւր անձին
աղատութիւն կխորհի , շատերն չուանով
պարսպէն կախուած վար իջնալով կը
փախչէին , որովհետեւ ժամանակ չունէ-

ին որ դիակաց բազմութեան մէջէն անց-
նելով դռնէն, և կամ պարսպի պատառ-
ուած տեղէն դուրս ելնէին, հայր իւր
որդին մուտքերէր, ոչ ոք ուրիշ ակն-
կալութիւն մը չունէր, մահուան սարսա-
փով ամենքն ալ լցուած էին. ամէն
մարդ ի փախուստ կ'իութար. ոմանք
խմբովին Եփրատ գետն անցնելով Տարո-
նոյ աւերակները կ'ապաստանէին, այլք
խոյս տալով Աշտիշատայ աւերակաց և
ձորակներու մէջ կ'օղէին. ուրիշներն
գիշերով զիրենք ի Մուշ կ'օղէին. թող-
լով իրենց որդիքն, և որդիք իրենց հայ-
րերն, հարսունք և աղջկունք, տղայք
և երիտասարդ, պառաւունք և ալեւորք
առանց օգնութեան ցորենի անդոց մէջ
կ'ապաստարուէին և միայն ցորենի եղի-
կով կ'աշխատէին, շատերն ի սովու կորեան,
որովհետեւ առ ահի ուր որ անկած էին՝
հոն կ'մնային, և մանաւանդ թէ որ փոքր
էին հասակաւ, և կամ կանանց կար-
գէն, Այս եղած է Տարօնոյ Հայ Ժողո-
վորդեան վիճակն. իրենց օրերն մահ-

ուամբ կ'անցնէին, կարօտ էին կտոր մը
չորաբեկ հացի. արեւակէզ և տօթակէզ
մահուան երկիւղով պաշարուած էին, և
այսպէս անտառներու և ձորակներու
մէջ մեռնելով անթաղ կ'մնային. Մինչ-
դեռ սոյն մահուան օրերն Հայոց վրայ
ժանրացած էին, Ռուսաց բանակն մուտ
դործեց ի Տարօն, և գալով միայն քանի
մը օր՝ Մշոյ ներքեւ բանակ կ'ազմելով
նստաւ, և յետ քանի աւուրց ելաւ Հայոց
Ժողովուրդ և իւրաքանչիւր ոք սկսաւ
իւր ընտանիք և որդին խնդրելու, և
դեռ Ժողովրդոց մէկ մասն իւր կորու-
սեալ անձանց ոսկրներ չգտած, Ռուսաց
զօրքն յետ քաշուեցաւ Մուշէն. Ժողո-
վուրդն տեսնելով սոյն անտանելի անց-
քերն, մէկ մասն Ռուսաց բանակի հետ
դադարեցին. չկար մէկը՝ որոյ աչքերէն
արեան արտասուք չհոսէր. ամենքն ալ
մեծամեծ կորուստներ ունէին. հնձոց
Ժամանակ մեռելոց ոսկերք կ'գտնուէին
արտերու մէջ. շատերն խաբաւ չգտին
իրենց սիրելեաց ոսկրներն. իսկ մնաց-

եալ կիսակենդան անձինք սարսուղեալ թողին իրենց հայրենի երկիրն և յօտարութիւն գաղթեցին : Իսկ Հագարացիք երբեկատեցին որ Ռուսք ետ պիտի երթան , և ժողովուրդն գաղթելով երկիրն պիտի ամայանայ , անմիջապէս գութ և կարեկցութիւն յայանեցին ժողովրդեան . սէր և խաղաղութիւն խոստացան , և այսպէս ժողովրդեան մէկ մասն շահուելով , մնացին իրենց հայրենի աշխարհի մէջ : Թէև ժողովուրդ նրկատած էր որ գաղթականութիւն իրեն մեծապէս վնասած էր , բայց իւր հայրենի աշխարհն եղած էր սպանդարան : Շատերն իրենց գաղթականութեան տեղերն չհասին : Արդարև այսպիսի հարուածեալ ժողովրդեան մը վրայ , ոչ թէ միայն մարդիկ գութ և խնամք կտանէին , այլ և գազանք . և որովհետև Հայք արժանի էին գթալու , Հագարացի իշխանէն սաստիկ հրաման եղաւ , թէ ո՛վ որ Հայոց վնաս տուած է , պէտք է՝ տիրովը դարձնէ . հրաման եղաւ որ

Խրաքանչիւր ոք իւր տանը մէջ հաստատ մնայ , և ո՛վ որ Հայոց վնաս մը տալու լինի՝ պիտի հատուցանէ : Մինչ ժողովուրդ սոյն արեան լճի մէջ կլողար , ոմանք իրենց անդրանկաց մահ կողբային , և որոց մէկ մասը գաղթած , և մէկ մասն մնացեր էր՝ միմեանց կարօտով կմաչէին , անմիջապէս սաստիկ սով մը վրայ եկաւ , և բոլոր Հայոց երկիրներու մէջը տարրացաւ . սկսան կենդանիք մեռելոց երանել թէ , երանի մեր յիշեցեաց որ մեռնելով սոյն օրին չհասին . արդարեւ ոչ թէ պատերազմի դառնութեան երեսէն միայն եղած էր , այլ և կը կարծես թէ երկնից բարկուածիւն էր . չորս տարիէն աւելի սոյն սովի դառնութիւնը տիրեց Մշոյ աշխարհին մէջ . չկար տուն մը՝ որոյ մէջ կտոր մը հաց գտնուէր , և ո՛վ որ օտար երկիրներէ երեք քու ցորեան բերէր սերմանելու՝ մէկ քու կհնձէր , և որոնք տասն լուծ ունէին՝ մէկ լուծ մնաց . սկսան մարդիկ իբրեւ զանասունս խոտ ճարա-

կեւ. շատերն այլ և այլ խոտերու հուն-
տերով կկերակրէին, և ոմանք վայրենի
խոտերէ թունաւորելով մեռան, և այլք
սովամահ եղան. շատերն թողլով իրենց եր-
կիրներն՝ դարձեալ գաղթականութեան
դիմեցին. Արդարեւ սոյն բռնութիւն
Տարօնոյ և Աշտիշատայ գաւառներու
հիմն տապալեց. Այս հարուածոց երե-
սէն մերայինք դեռ յօտարութեան կը
դեգերին ցաւօք սրտի. սոյն երկու դառն
ժամանակներ Հայոց ճրագը մարեց.
դեռ լիութիւն մուտ չէր գործած մեր
աշխարհը՝ Մարաց և Հաղարացւոց մէջ
խռովութիւն տիրեց. Մարք ըստ նախ-
կին սովորութեան կուզէին Հայոց ժո-
վուրդը կեղեքել, Հաղարացի իշխանք
Հայոց պաշտպան էին, զնանք դարձեալ
Հայոց կլկնէր, եթէ Հայեր ըստ հին
սովորութեան Մարաց պէտքերն չհո-
գային, Հայոց բոլոր աշխատանքն հրոյ
ճարակ կառնէին, անդերու մէջ քաղ-
ուած ցորեաններու բարդոյններ, և
դիզուած խոտերն կվառէին, գիշեր չկար

որ Տարօնոյ դաշտի երեսի վրայ, Հայոց
ինչք և ապրանք հրոյ ճարակ չերթային.
սոյն վատ սովորութիւն ցարդ մնացեր
է Հայոց աշխարհի մէջ. բայց Հագա-
րացի իշխանք աւելի Հայերն կսիրէին,
և իրենց երեւելի գործոց վրայ Հայ կը
դնէին. Մինչ ժողովրդեան նաւակն այս-
պէս խռովութեանց ալեաց վրայ կծվար,
և կարօտութեան կսկիծն ամենուն սիրան
կրեկէր, անմիջապէս ետեւեն անողոր-
մաբար մահուան մանդաղն հասաւ, կը
հնձէր ու կկարէր բոլորի կենաց թէ-
լերն, և ուր անդրանիկ մը լինէր՝ անմի-
ջապէս մահ վրայ կհասնէր, չկար բնա-
կութիւն մը որոյ մէջէն մահուան դոյժ
չենէր, ամենուն վրայ կթագաւորէր
մահուան իշխանութիւն. Մարաց և Հա-
ղարացւոց բռնաւորք՝ որ Հայոց ժողո-
վուրդն կլափէին մեծ մասամբ, այն մահ-
ուան մանդաղով իրենց չարաչար հա-
տուցումն առին. վերջապէս, երկիրն
սոյն խռովութեան և աւերման մէջ մը-
նաց, իւրաքանչիւր ոք իւր սրի ծայրով

խեղճ Հայոց հետ կ'ուսէր, մինչեւ որ Տաճկաց տէրութեան օրէնքն ու կանոն մուտ դործեց այն երկիրներու մէջ, և Հագարացի իշխանաց ձեռքէն ազատեցան: Եւ այսուհետեւ ինչ անցքեր անցան մեր աշխարհի գլխէն, Մարք և Հայեր ինչպէս վարուեցան միմեանց հետ, մեր Սխակ ու Գուրգէն անունով տեղակի միջոցաւ պիտի հրատարակուի: Եթէ տպագրութեան օգնող լինի: Իրաւունք ունինք Տարօնոյ ու Աշտիշատայ գաւառներէն, և մանաւանդ Մատնալանքէն դոյժ արձակել ըստ Ասողկն թէ, «հեղին զարիւն շուրջ Երուսաղէմի»։ Իրաւունք ունինք ըսելու թէ, սոյն նոր Երուսաղէմն աւելի ողբոց արժանի է: որովհետեւ հին Երուսաղէմի մէջ նախկին աստուածապաշտ ժողովրդոց արիւնը միայն կ'թափէր, իսկ սոյն նոր Երուսաղէմն որ Մատնալանքն է, որչափ նոր աստուածապաշտ ժողովրդոց արիւն թափուեցաւ խառն ընդ արեան օտարաց: Եթէ հին Երուսաղէմ կ'մտնուի



թէ իւր սրբոց մարմիններ անթաղ մնացին, ապա նոր Երուսաղէմն ո՛վ պիտի մխիթարէ, ուր նոր խորայեւացիք իրենց Փրկչի համար իբրեւ դառինք ի Գողգոթա կ'վարուէին, և այնչափ սրբոց և նահատակաց մարմիններ անթաղ մնացին, և դազանաց ու թռչնոց կեր եղան Տարօնոյ և Աշտիշատայ լեռներն ու դաշտեր արիւնով չաղուեցան, ոչ ոք չեղաւ ըսող մը թէ, մխիթարեցէք մխիթարեցէք զժողովուրդ իմ: ո՛վ եղաւ այն աշխարհի արտասոււաց սրբոյն, որ դաշտի և ձորակի մէջ երթաս մահուան կոթող մը կայ կանգնած, որ արիւնաթաթաւ Տարօնոյ և Աշտիշատայ գաւառներու մահուան կտակներ կկարդան, ոչ ոք նոցա որդւոց խնամք չտարաւ. հասնող զայն աշխարհ վիրաւորեց. և կարծես թէ բնական թշնամութիւն ունին նոյն աշխարհի հետ. իւր որդիք մուռացան իրենց հայրենի փառքն, մերկ և նօթի թողլով իրենց հայրենի երկիրն, իրենց սրդիքն և ընտանիքն դնալով յօ-

տարութիւն, իրենց քրտանց կաթիլնե-
րով կտոր մը հացի համար կաշխատին,
զայն ևս իրենց ձեռքէն կօրզելով կը
յափշտակեն, ո՛վ զթաց Տարօնոյ աշ-
խարհի վրայ, ո՛վ կըթեց նոցա միտքն,
և անոնք ուսմունք և խրատ չառին: Ի
վերջոյ, թո՛ղ իրենք իրենց ողորմին, և
թո՛ղ իրենք իրենց բեռն բառնան: Ահա
մեր վերջին խօսքն ա՛յս է Տարօնոյ հա-
մար:





